

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ԴԵՐԸ
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ © 1939

31 JAN 2018


ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ԴԵՐԸ
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՊԵՏԶՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



11-283749/1

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ
О РОЛИ ИНТЕЛЛИГЕНЦИИ
В СССР

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Խնտելիզենցիայի դերի և պրոլետարական կուսակցության նրա հանգեպ ունենալիք վերաբերմունքի հարցը միշտ կանգնած է՝ յեղել բոլշևիկյան կուսակցության տեսադատում և արտացոլում է գտել մի շարք կուսակցական վորոշումներում: Պրոլետարական գիկտատուրայի և հասարակության սոցիալիստական վերակառուցման ժամանակաշրջանում նա առանձնապես մեծ նշանակություն և ձևեր բերել:

Բոլշևիկները միշտ ել իրենց հաշիվ են տվել սոցիալիստական հասարակություն կառուցելու հսկայական զբվարությունների մասին: Լենինը սովորեցնում էր, վոր այդ զվարությունները անխուսափելիորեն կծառանան իշխանությունը վերցնող բանվոր դասակարգի առաջ, յերբ նա խնդիր կգնի «փոխարկել կուլտուրայի և գիտությունների և տեխնիկայի՝ կապիտալիզմի կողմից կուտակված հարստագույն, մեղ համար պատմականորեն անխուսափելի—անհրաժեշտ պաշարի սմբողջ գումարը,—փոխարկել այդ բոլորը կապիտալիզմի գենքից, սոցիալիզմի գենքի»¹:

Առանց կապիտալիստական հասարակության կուլտուրայի պաշարին և տեխնիկայի գիտելիքներին տիրապետող կադրերի աներևակայելի կլիներ մտածել անգամ սոցիալիզմի կառուցման մասին: Ուստի մեր կուսակցությունը բացառիկ նշանակություն էր տալիս այն միջոցառումներին, վորոնց նպատակն էր խնտելիզենցիային քաշել խորհրդային իշխանության կողմը: Խորհրդային իշխանության առաջին իսկ օրերից պրոլետարիատի գիկտատուրայի առաջ խնդիր դրվեց՝ սոցիալիզմի կառուցմանը մասնակից դարձնել հին, իր մեծամասնությամբ բուրժուական և մանր—բուրժուական խնտելիզենցիային և միաժամանակ պատրաստել իր, նոր

¹ Լենին, հ. XXIII, էջ 41:

ինտելիգենցիան, բանվորա-գյուղացիական ինտելիգենցիան, ժողովրդական, սոցիալիստական ինտելիգենցիան:

Խորհրդային պետութեան մեջ այս խնդրի յերկու կողմն ել արդեն լուծված են: Չնայած հին ինտելիգենցիայի զգալի մասի՝ հեղափոխութեան առաջին տարիներին համառ դիմադրութեանը, այնուամենայնիւ, նրա մի մասը յեկալ ծառայելու սոցիալիստական պետութեանը. միևնույն ժամանակ խորհրդային իշխանութեան տարիներին ստեղծվեց նոր, բանվորա-գյուղացիական ինտելիգենցիա:

«Հին ինտելիգենցիայի մնացորդները լուծվեցին նոր, խորհրդային, ժողովրդական ինտելիգենցիայի ընդերքում: Ստեղծվեց, այսպիսով, նոր, խորհրդային ինտելիգենցիա, սերտորեն կապված ժողովրդի հետ և իր մասնայով պատրաստ հոգով ու մարմնով ծառայելու նրան»¹:

Դեպի մեր խորհրդային ինտելիգենցիան ունենալիք վերաբերմունքի հարցը որակարգում դրվեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին կայացրած պատմական վորոշմամբ:

«Վոչ մի պետութիւն չի կարողացել և չի կարող յուր գնալ առանց իր ինտելիգենցիայի, առավել ևս չի կարող առանց իր ինտելիգենցիայի յուր գնալ բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետութիւնը»:

Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն խիստ դատապարտեց արհամարհական, ամբարտաւան վերաբերմունքը դեպի կուսակցական և անկուսակցական խորհրդային ինտելիգենտը, «վորպես դեպի յերկրորդ տեսակի մարդ, թեկուզ նա լինի յերեկվա ստախանովական, վորն իր ծառայութիւններին շնորհիւ առաջ և քաշվել խորհրդային պետութեան դեկալար պոստի»:

Այնուհետեւ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը մասնանշեց.

«Այդպիսի հակարդ շեղանք վերաբերմունքը դեպի խորհրդային ինտելիգենցիան վայրենի յե, խուլիզանական ու վտանգավոր խորհրդային պետութեան համար...»

¹ Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցութեան XVIII համագումարում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին, Հայպետհրատ—Քաղ. դրակ. հրատ., էջ 70, 1939 թ.:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում և, վոր ինտելիգենցիայի հանդեպ դոյութիւն ունեցող այս «մախայեւական», հակալենինյան վերաբերմունքին անհրաժեշտ և վերջ դնելը»:

Կուսակցութեան XVIII համագումարում արած իր հաշվետու զեկուցման մեջ ընկեր Ստալինը անդրադարձաւ մեր թերիւրի ու պրակտիկայի այդ կարեորագուցն հարցին:

«Չնայած խորհրդային ինտելիգենցիայի հարցում կուսակցութեան ունեցած դիրքի լիակատար պարզորոշութեանը, —ասաց ընկեր Ստալինը, —մեր կուսակցութեան մեջ դեռեւ տարածված են դեպի խորհրդային ինտելիգենցիան թշնամական և կուսակցութեան դիրքի հետ անհամատեղելի հայացքներ: Այդ սխալ հայացքներ կրողները... չարունակում են հին շվին փշել, սխալ կերպով խորհրդային ինտելիգենցիայի վրա տարածելով այն հայացքներն ու վերաբերմունքը, վորոնք իրենց հիմքն ունենին հին ժամանակ, յերբ ինտելիգենցիան ծառայում եր կալվածատերերին ու կապիտալիստներին»¹:

Վարպետի հասկանանք այս հարցի դրվածքի ամբողջ կարեորութիւնը, անհրաժեշտ և հետ նայել և հայացք դրել ուսական ինտելիգենցիայի զարգացման պատմութեան վրա, ոկոած այն ժամանակից, յերբ նա դարձաւ հասարակական շարժման նշանակելի գործոն: Մենք կտեսնենք, թե ինչպիսի դեր և խաղացել ինտելիգենցիան հեղափոխութեան մեջ, ինչպիսի ուղի յե անցել նա խորհրդային իշխանութեան որով. մենք ամէլի հանդամանորեն կծանոթանանք հասարակական շարժման այն նողկալի հոսանքի հետ, վորը պատմութեան մեջ մտել և մախայեւչիւնա անունով:

Ամենից առաջ անհրաժեշտ և պայմանավորվել, թե ինչ բան և հենց «ինտելիգենցիա» հասկացողութիւնը: Պատմական ասպարեզում գործող յուրաքանչյուր հասարակական դատակարգ միշտ առաջ և քաշում իր ինտելիգենցիան: Մենք զիտենք տղիւականական, բուրժուական, մանր-բուրժուական և պրոլետարական ինտելիգենցիա: Մինչ հեղափոխա-

¹ Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցութեան XVIII համագումարում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին, Հայպետհրատ—Քաղ. դրակ. հրատ., էջ 68, 1939 թ.:

կան ժամանակ ռուսական ինտելիգենցիայի մեծ մասը կազմում էին բուրժուական և մանր-բուրժուական միջավայրից յելածները: Պրոլետարիատը և գյուղացիությունը իրենց միջից անհամեմատ քիչ չափով էին տալիս իրենց ինտելիգենցիան, վորովհետև նրանց համար գեղարարչված էր հաղորդակից լինելը գիտություններին: Միմիայն սոցիալիստական հեղափոխությունն առաջ քաշեց «Գիտությունը—աշխատավորներին» լոզունգը և հաջողությամբ իրականացրեց այն: Մինչև խորհրդային իշխանության հաղթանակը բանվորների և գյուղացիների զգալի մասսային անդամ գրագիտությունն անմատչելի յեր:

Յարկովի ժամանակ հին ինտելիգենցիայի զգալի մասը «հոգով և սրտով» էր ծառայում ցարին, կալվածատերերին և կապիտալիստներին: Նրա վորքը մասն էր պայքարում ցարիզմի դեմ, մասնակցում հեղափոխական շարժմանը:

Իսկ ո՞ւմից էր բաղկացած այն ինտելիգենցիան, վորը մասնակցում էր հեղափոխական շարժմանը Ռուսաստանում:

Յուրաքանչյուր եպիսոպոս, յուրաքանչյուր դասակարգ ունի իր ինտելիգենցիան: Դեկարրիստների շարժման ժամանակ աչքի ընկավ ազնվականական հեղափոխության հերոսների մի ամբողջ ֆալանգա: Լենինը նրանց մասին գրել է «Գերցենի հիշատակին» հոդվածում:

«Աղնվականները Ռուսաստանին տվին Ռիբոններ և Արակչեյեվներ, անթիվ քանակությամբ «հարեցող սպաներ, կռիվ հորդորողներ, թուղթ խաղացողներ, տոնավաճառների հերոսներ, չնասրաններ, կովարարներ, մտրակահարողներ, հարեմապահներ» և բարեհոգի Մանիլովներ: «Յեվ նրանց միջև—գրում էր Գերցենը—զարգացան գեկտեմբերի 14-ի մարդիկ, այն հերոսների ֆալանգան, վորոնք սնվել-մեծացել էին, ինչպես Հոռոմուսը և Հոեմոսը, վայրի դադանի կաթով... Դրանք ինչ-վոր դյուցազններ էին, վորոնք վորից մինչև գլուխ կոփված էին գուտ պողպատից, սխրակից—ոսգմիկներ, վորոնք գիտակցաբար դիմում էին դեպի ակնհայտ մահ, վորպեսզի նոր կյանքի համար զարթեցնեն յերիտասարդ սերունդը և մաքրեն դահճության ու

ստորաքարշության միջավայրում ծնված յերեխաներին»¹:

Հեղափոխականների այդ սերնդի, անցյալ դարի առաջին քառորդի ազնվականական հեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչները միևնույն ժամանակ հանդիսանում էին առաջավոր յեվրոպական բուրժուական դեմոկրատիայի գաղափարները կրողներ: Նրանք ամբողջ գլխով բարձր էին իրենց ժամանակակիցներից, վորոնք ստորաքարշություն էին անում ցարերի առաջ: Նրանք հանդես յեկան ցարիզմի և ճորտատիրական իրավակարգի դեմ: Նրանց մեջ կային այնպիսի մարդիկ, ինչպես Պեստելը: Դեկարրիստների ճախ թիւը Պեստելի գլխավորությամբ համապետականներ էին, այն ժամանակվա յեվրոպական դեմոկրատիայի առաջավոր ներկայացուցիչներ: Լենինը բարձր էր գնահատում դեկարրիստների հանրապետական տրագիկանները: Անցյալ դարի առաջին կեսը տվեց ազնվականության հսկայական դերակշռում հեղափոխական շարժման մեջ: Լենինը «Դասերի և դասակարգերի դերը ազատագրական շարժման մեջ» հոդվածում տվյալներ է բերում ազատագրական շարժման մեջ տարբեր դասերի խաղացած դերի մասին 80 տարվա ընթացքում, 1827-ից մինչև 1908 թ.: Պետական հանցանքների համար պատասխանատվության կանչված յուրաքանչյուր 100 հոգուն այն ժամանակ ընկնում էր:

Դարաշրջաններ	Աղնվականներ	Մեչչաններ և գյուղացիներ	Հոգևորականներ	Վաճառականներ
1827—1846	76,0	23,0	?	?
1884—1890	30,6	46,6	6,4	12,1
1901—1903	10,7	80,9	1,6	4,1
1905—1908	9,1	87,7	?	?

«Այսպեղից պարզ յերևում է,—պարզաբանում է Լենինը այս աղյուսակը,—թե ինչպես արագ էր դեմոկրատանում ազատագրական շարժումը XIX դարում և ինչպես սուր կերպով էր փոխվում նրա դասակարգային կազմը: Ճորտատիրական դարաշրջանը (1827—1846 թ. թ.) ազնվականության լիակատար դերակշռումն է: Դա դեկարրիստներից մինչև

¹ Լենին, հ. XV, էջ 404:

Գերցենն ընկած դարաշրջանն է: Ճորտատիրական Ռուսաստանը ընկճված է և անշարժ: Բողոքում է ազնվականների աննշան փոքրամասնությունը, վոր անգոր է առանց ժողովրդի աջակցության: Բայց լավագույն մարդիկ ազնվականներից ոգնեցին արքնացնել ժողովրդին¹:

Հին Ռուսաստանում իշխող ազնվականների դասակարգի այս լավագույն մարդիկ վիթխարի հասարակական խնդիր կատարեցին՝ նրանք ոգնեցին արթնացնելու ճորտատիրական Ռուսաստանի ժողովրդին, վորն այն ժամանակ խիստ ընկճված էր և ճնշված:

Ազնվական հեղափոխականներին փոխարինելու յեկան ռազնոչինեցները: Նրանք միանգամից ղեկավար դեր չգրավեցին: Ազատագրական շարժման մեջ դեռ յերկար ժամանակ գերակշռում էյին ազնվականները: Լուսավորիչների և նարոդնիկների մեջ մենք տեսնում ենք, թե ինչպես ռազնոչին ինտելիգենցիան ավելի ու ավելի մեծ դեր է խաղում հասարակական շարժման մեջ: Ազնվականը նարոդնիկների մեջ—դա «զղջացող ազնվական է», վորը իրեն պարտական է համարում ժողովրդի առաջ: Նրանցից չատերն իրենց հեղափոխական գործունեություն վրա նայում են վորպես ժողովրդին «պարտքը վերադարձնելու» վրա, ժողովուրդ, վորն ուժեր և միջոցներ է ծախսել, վորպեսզի ինտելիգենցիան կարողանա աճել: Այդ ժողովուրդը տանջվում—չարչարվում է, «հարգանքով» վերապահելով կրթված հասարակությունը «խորասուզվել արվեստների, գիտությունների մեջ, անձնատուր լինել յերազանքների և կրքերի» (Նեկրասով):

Լենինը ցույց է տալիս, թե ինչպես 80—90—ական թվերին «ազատագրական շարժման մասնակիցների մեջ ազնվականներն արդեն ավելի փոքր մասն են կազմում: Բայց, յեթե նրանց ավելացնենք հողեւորականությունը և վաճառականությունը, կտանանք 49%, այսինքն համարյա կեսը: Շարժումը դեռ կիսով չափ մնում է արտոնյալ դասակարգերի՝ ազնվականների և բուրժուազիայի վերնախավերի շարժում: Այստեղից—չարժման անգորությունը, չնայած միայնակների հերոսությունը²:

Հեղափոխական շարժման մեջ ռազնոչին ինտելիգենցիայի գերակշռման ժամանակաշրջանը մեզ տվել է լուսավորիչների և նարոդնիկների մի փայլուն պլեյադա՝ լուսավորիչներ—Բեկինսկուն, Գերցենին, Չերնիշևսկուն, Դոբրոլյուբովին, Պիսարևին. դրոդներ, բանաստեղծներ, ինչպես Մալտիկով—Շչեդրինը, Նեկրասովը, Չայկա, Միխայլովը, Կուրդիլինը, նարոդնիկական շարժման ակնավոր գաղափարախոսներ և կազմակերպիչներ—Բակունինին, Նեչայեվին, Կրոպոտկինին, Լավրովին, Տկաչևին, Միխայլովսկուն, Ժեյարովին, Պերովսկայային, Ֆիդներին: Միաժամանակ դրական ապարեզում գործում է նարոդնիկ—դրոդների մի խումբ—Ուսպենսկին, Ջլատովրատսկին, Ռեչտնիկովը, Կարոնինը, Յակուբովիչը, Ստեպյակ—Նրավչինսկին, Կորոլենկոն: Բայց արդեն այդ ժամանակաշրջանում հեղափոխական ինտելիգենցիայի մեջ ջղնվում է կազմակերպիչների և պրոպագանդիստների ֆիզուրան բանվորական միջավայրից՝ Պյոտր Ալեքսեյիվը, Ստեպան Խալտուրինը, Սեմյոն Ազապովը, Վիկտոր Ուրնովսկին, Պյոտր Մոխոյենկոն և ուրիշները: Նրանք արդեն իրենցից ներկայացնում էյին պրոլետարական ինտելիգենցիայի սաղմերը: Գաղաքական պայքարի խնդիրների ըմբռնման տեսակետից նրանք ամբողջ գլխով բարձր են կանգնած ռազնոչին—նարոդնիկական ինտելիգենցիայի միջավայրից յեւած ղեկավարներից:

Այդ ժամանակաշրջանում ռազնոչին նարոդնիկական ինտելիգենցիան հսկայական դեր է խաղում: Նրա պայքարը ցարիզմի դեմ հեղափոխական է, քանի վոր նա հանդես է գալիս վորպես գյուղացիական, այսինքն՝ բուրժուական դեմոկրատիայի գաղափարախոս հանուն յերկիրը ճորտատիրական մնացորդներից հեղափոխականորեն մաքրելու, հանուն ինքնակալության լիկվիդացիայի: Ինտելիգենտ ռազնոչինեցներն արտահայտում էյին գյուղացիություն մաքրութունական շահերը, նրա դեմոկրատական ձգտումները, թեպետև իրենց ծրագրերին սոցիալիստական գունավորում էյին տալիս: Նրանց մեղհանական կամ գյուղացիական սոցիալիզմը, նրանց յերազանքները սոցիալիստական գյուղացիական հեղափոխության մասին, նրանց թեորիական հա-

¹ Լենին, 4. XVI, էջ 575:

² Նույն տեղում, էջ 575—576:

յացքներն ըստ եյության ռեակցիոն եյին և մնացին սոսկ վորպես բարեհոգի յերազանդներ, քանի վոր նրանց շարժումը չէր հենվում դասակարգի կազմակերպության վրա:

Վերևում մեր քաղվածած՝ Լենինի հոդվածում մեկ աղյուսակ ել ե բերված—տվյալներ աղատաբերական շարժման մասնակիցների պրոֆեսիաների մասին վերջին յերեք դարաշրջանների համար: Պետական հանցանքների համար պատասխանատվության կանչված յուրաքանչյուր 100 հոգու վրա դալիս եյին անձեր, զբաղված՝

Դարաշրջաններ	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն և առևտրով	Լիբերալ պրոֆեսիաներով և սովորողներ	Անորոշ զբաղմունքներ և առանց զբաղմունքների
1884—1890	7,1	15,1	53,3	19,9
1901—1903	9,0	46,1	28,7	8,0
1905—1908	24,2	47,4	22,9	5,5

Այսպիսով, նարոդնիկության և նարոդովոլականության դարաշրջանում (1884—1890 թ.թ.) շարժման մասնակիցների մեծամասնությունը կազմում եյին սովորողները և լիբերալ պրոֆեսիաների անձնավորությունները: Այդ թվերը Լենինը հետևյալ կերպ ե մեկնաբանում.

«Բուրժուա-լիբերալ և լիբերալ-նարոդնիկական շարժումների խառնվելը սովորողների և ինտելիգենտների աչքի ընկնող դերով հանդերձ—ահա այն ժամանակվա կուսակցությունների և այն ժամանակվա շարժման դասակարգային եյությունը: Գյուղացիները («գյուղատնտեսությունը») և արդյունաբերական բանվորները («արդյունաբերությունը և առևտուրը») տալիս են պատիկ փոքրամասնություն (7 և 15%): Այսպես կոչված—ապաղասակարգայնացած մարդիկ, այսինքն՝ իրեն դասակարգից դուրս ընկածները, վորոնք մնացել են առանց կապի վորոշ դասակարգի հետ,—այդպիսի մարդիկ կազմում են մեկ հիմնաքաղը (19,9%), այլե՛լի չա՛տ, քան գյուղացիները, այլե՛լի չա՛տ, քան բանվորները:

Ահա թե վորտեղից են շարժման յուրահատուկ ձևերը, հերոսության վեհությունը և նրա անգորությունը»¹:

Բայց հենց այն պատճառով, վոր այն ժամանակ շարժման մասնակիցների գլխավոր մասնակց կազմում ե ուղիղ ինտելիգենցիան, նա հակված ե իրեն դիտել վորպես «յերկրի աղ», վորպես շարժման հիմք: Գյուղացիական մասսայական շարժման բացակայությունը և կազմակերպված բանվորական շարժման թուլությունը, բանվոր դասակարգի դերի չհասկանալը և թերադնահատումը հեղափոխության մեջ, անկարողությունը՝ զարգացնել և կազմակերպել բանվորական շարժումը և հենվել նրա վրա, նարոդնիկական թեորիաների անհոգությունն ու ուտոպիականությունը՝ հասցնում են այն բանին, վոր նարոդնիկության գաղափարախոսները ստեղծում են «հերոսների» և «ամբոխի» թեորիան, «քննադատորեն մտածող անհատի» թեորիան: Վերջին թեորիայի հեղինակն եր Պ. Լ. Լավրովը: Իր «Исторические письма» զրվածքում նա փորձում եր «ապացուցել», վոր հասարակությունը բաժանվում ե հերոսների—քննադատորեն մտածող անհատների, վորոնք հանդիսանում են պատմական պրոդրեսի շարժիչները,—և ամբոխի: Նրա գաղափարները լայնորեն տարածվեցին նարոդնիկական ինտելիգենցիայի մեջ: Հետո այդ գաղափարները զարգացրին Միխայլովսկին և նարոդնիկության մյուս գաղափարախոսները:

«Բայց ի՞նչպես եր ընթանում պատմությունը: Ո՞վ եր նրան շարժում»—հարցնում ե Լավրովը: Յեվ այս հարցին պատասխանում ե՝ «Միայնակ պայքարող անհատները»: Այս ե ինտելիգենցիայի դերը:

Իսկ ժողովուրդը:

«Այլևորդ ե խոսել անգամ իրերի նկատմամբ քննադատական հայացք մշակելու մասին, բնության որենքների անփոփոխելիությունը և արդարության ուտիլիտար նշանակությունը հասկանալու մասին այն հսկայական թիվ մարդկանց համար, վորոնք դեռ պետք ե պաշտպանեն իրենց գո-

¹ Լենին, հ. XVI, էջ 576:

² Պ. Լ. Լավրով, Избранные сочинения, հ. I, էջ 252, Քաղտա-
ժանակիւրների և աքտորարնակների Միութենական ընկերության հրատ.,
1934 թ.:

յությունը մշտական վտանգի դեմ»¹։ Այսպես էլին պատկերացնում իրենց նարոդնիկներն ինտելիգենցիայի և ժողովրդի, մասսայի, «ամբոխի» փոխհարաբերությունները։

Այդ իդեալիստական հայացքների դեմ ամբողջ վճռականությամբ դուրս յեկան Պլեխանովն ու Լենինը։

«Ինչպիսի ժառանգությունից ենք մենք հրաժարվում» հոգեվածում, բնութագրելով նարոդնիկությունը, Լենինը մատնանշեց, վորպես այդ հոսանքի կարևորագույն սխալներից մեկը, վոր նարոդնիկները ինտելիգենցիային համարում էին վերդասակարգային ուժ։ Նարոդնիկության համար բնորոշ էր, գրում էր Լենինը, ««Ինտելիգենցիայի» և յերկրի կրավարքանական-ֆադաֆական հիմնարկների՝ հասարակական վորոշ դասակարգերի նյութական շահերի հետ ունեցած կապի անտեսումը։ Այդ կապի բացասումը, այդ սոցիալական գործոնների մատերիալիստական բացատրության բացակայությունը հարկադրում է նրանց մեջ տեսնել մի ուժ, վորը ընդունակ է «պատմությունը քաջ տալ այլ դժուր»... «չեղել ճանապարհից» և այլն»²։

Ինչքան հեղափոխական շարժումը դառնում է մասսայական բանվորական և գյուղացիական,—այնքան զգալիորեն փոխվում է նաև ինտելիգենցիայի դերը։ Նախահեղափոխական դարաշրջանում (1901—1903 թ.թ.) քաղաքային բանվորները, յերկրում փոքրամասնություն կազմելով, տալիս են հեղափոխական շարժման մասնակիցների համարյա կեսը։ Բանվորների այդ դերը ե՛լ ավելի յե աճում 1905—1908 թվականներին և հետագա տարիներին։ Ե՛լ ավելի յե մեծ դառնում նրանց դերը 1917 թվականին։

Հասարակական շարժման ամբողջ պատմությունը ցույց է տալիս, վոր հեղափոխական ինտելիգենցիան միշտ կապված է յեղել այս կամ այն հասարակական դասակարգի գործունեյության հետ։ Յերբ ընկեր Ստալինի՝ անգլիական գրող Հ. Զ. Ուեյսի հետ տեղի ունեցած գրույցում վերջինս մատնանշեց փաստաբանների խաղացած դերը Ֆրանսական մեծ հեղափոխության մեջ, ընկեր Ստալինը նրան տվեց

ուշադրավ մի պատասխան. վորը ցույց է տալիս, թե մարքսիստներն ինչպես են հասկանում ինտելիգենցիայի դերը հեղափոխության մեջ։

«Դուք ժխտո՞ւմ եք միթե ինտելիգենցիայի դերը հեղափոխական շարժումների մեջ։ Ֆրանսական մեծ հեղափոխությունը մի՞թե փաստաբանական հեղափոխություն էր և վոչ թե ժողովրդական հեղափոխություն, վորը հաղթեց, վոտքի հանելով ժողովրդական հսկայական մասսաներին ֆեոդալիզմի դեմ և պաշտպանելով յերրորդ դասի շահերը։ Յեվ մի՞թե Ֆրանսական մեծ հեղափոխության առաջնորդների մեջ յեղած փաստաբանները հին կարգերի որենքներով էլին գործում, մի՞թե նրանք նոր, բուրժուական հեղափոխական որինականություն չմտցրին»¹։

Պրոլետարական սոցիալ-դեմոկրատական շարժումը դեպի ինքը գրավեց ինտելիգենցիայի բավականաչափ կադրեր։ Պլեխանովի հիմնած «Աշխատանքի ազատագրություն» խումբը, ինչպես նաև Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը», վորի ստեղծիչը հանդիսանում է Լենինը, իրենց գործունեյությամբ շրջադարձ առաջացրին հեղափոխական և ուղղվեցիոնորեն տրամադրված ինտելիգենցիայի զգալի մասի մեջ—նրա լավագույն, ամենից ավելի հեղափոխական և դեմոկրատական մասի մեջ—դեպի մարքսիզմը։ Այդ շարժումը առանձնապես նշանակալից է յեղել 1894—1898 թ.թ. ժամանակաշրջանում, վորը Լենինն անվանում է սոցիալ-դեմոկրատական շարժման «մանկության և պատանեկության» ժամանակաշրջան։

Նարոդնիկության, լեզալ մարքսիստների և «եկոնոմիստների» դեմ մղած պայքարում են կոփվել հեղափոխական մարքսիստների կադրերը, Լենինի և Ստալինի ղեկավարությամբ դաստիարակվեցին պրոֆեսիոնալ հեղափոխականների բուլչեիկյան կադրերը, վորոնք հսկայական դեր խաղացին յերեք հեղափոխությունների ղեկավարության գործում։

«Մեր շարժումը,—գրում էր Լենինը «Искра»-յի № 3-ում,—այժմ ունի մի ամբողջ բանակ, բանվորների

¹ Ստալին, Լենինի դի հարցերը, հայ. հրատ., էջ 891։

¹ Նույն տեղում, էջ 205։

² Լենին, հ. II, էջ 321։

բանակ, վորին չոչափել է սոցիալիզմի ու ազատութեան համար մղվող պայքարը,—ինտելիգենտները բանակ, վոր մասնակցել է ու մասնակցում է շարժմանը և այժմ արդեն ցրված է Ռուսաստանի բոլոր ծայրերում,—համակրողների բանակ, վոր հավատով ու հուսով է նայում բանվորական շարժմանը և պատրաստ է հաղարավոր ծառայութեանն ամուսնացել նրան»¹:

Բանվորական շարժման մեջ ինտելիգենցիայի ունենալիք դերը վերաբերյալ հարցն առանձին սրութեամբ բարձրացավ «եկոնոմիստները» դեմ Լենինի մղած պայքարի կապակցութեամբ: «Եկոնոմիստները», նվաստացնելով առաջավոր հեղափոխական թեորիայի դերը բանվորական շարժման մեջ, իսկ յերեման ել բոլորովին ժխտելով նրա դերը, բանվորների պայքարը կապիտալիստների դեմ հանդեցնում եյին զուտ տնտեսական պայքարի հանուն նյութական դրութեան բարելավման: Ուրոտունիստական, բերնչտայնական գրույթը՝ «շարժումն ամեն ինչ է, վերջնական նպատակը՝ վոչինչ»՝ դարձավ «եկոնոմիստները» մարտական դրոշմը: «Եկոնոմիստները» ժխտում եյին ինքնուրույն կենտրոնացված քաղաքական բանվորական կուսակցութեան ստեղծելու անհրաժեշտութեանը, բանվորների մեջ սերմանում եյին անօտարմանութեան դեպի հետեղական հեղափոխական, մարքսիստական ինտելիգենցիան, վորը բանվորների մեջ տարածում եր քաղաքական պայքարի անհրաժեշտութեանը պաշտպանող Մարքսի հեղափոխական թեորիան:

«Եկոնոմիստները» խոնարհվում եյին բանվորական շարժման տարերայնութեան առաջ. ինչպես դիպուկ արտահայտվել է Գ. Վ. Պլեխանովը, «եկոնոմիստները» «հայում եյին միայն պրոլետարիատի քամակը»: «Եկոնոմիստները» պնդում եյին, «վոր բանվորական շարժման մեջ գիտակցական տարրի դերը, սոցիալիստական գիտակցութեան, սոցիալիստական թեորիայի կազմակերպող և ուղղութեան տվող դերն աննշան է, կամ գրեթե աննշան, վոր սոցիալ-դեմոկրատիան բանվորներին չպետք է բարձրացնի մինչև սոցիալիստական գիտակցութեան մակարդակը, այլ, ընդհակառակը, ինքը

պիտի համակերպվի ու ինչի մինչև բանվոր դասակարգի միջին կամ առավել հետամնաց խավերի մակարդակը, վոր սոցիալ-դեմոկրատիան չպետք է բանվոր դասակարգի մեջ սոցիալիստական գիտակցութեան արմատավորի, այլ պիտի սպասի, մինչև վոր բանվոր դասակարգի տարերային շարժումն ինքն իր սեփական ուժերով սոցիալիստական գիտակցութեան մշակի»¹:

«Եկոնոմիստները» դեմ գրականութեան մեջ հանդես գլան Լենինն ու Պլեխանովը, ավելի ուշ ընկեր Ստալինը «Հանդեսներն» կուսակցական տարածայնութեանն և «Եկոնոմիստները» բրոշյուրով:

Լենինն իր նշանավոր «Ի՞նչ անել» աշխատութեան մեջ ամենալճական հակահարված է տվել «եկոնոմիստներին»: Նրա պայքարը «եկոնոմիստները» դեմ պայքար եր միջադպարին ուղղուողի դեմ, այն ուղղված եր բարձրացնելու բանվորական շարժման քաղաքական գիտակցութեանը, պայքարելու «եկոնոմիստները» «Рабочая Мысль»-ի և «Рабочее Дело»-յի տրեդյունիստական քաղաքականութեան դեմ:

«Բոլոր յերկրների պատմութեանը վկայում է,—գրում եր Լենինը,—վոր բացառապես իր սեփական ուժերով բանվոր դասակարգն ի վիճակի յե մշակելու միայն տրեդյունիստական գիտակցութեան, այսինքն՝ համոզմունք, վոր անհրաժեշտ է համախմբվել միութեանների մեջ, պայքար մղել տերերի դեմ, կառավարութեանից պահանջել ու գլուխ բերել բանվորների համար անհրաժեշտ այս կամ այն որոնքների հրատարակում և այլն: Իսկ սոցիալիզմի ուսմունքը աճել է փիլիսոփայական, պատմական, տնտեսական այն թեորիաներից, վորանք մշակվել են ունեւոր դասակարգերի կրթված ներկայացուցիչների, ինտելիգենցիայի կողմից: Արդի գիտական սոցիալիզմի հիմնադիրները, Մարքսն ու Ենգելսը, իրենք ել, իրենց սոցիալական դրութեամբ, բուրժուական ինտելիգենցիային եյին պատկանում: Ճիշտ նույնպես և Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատիայի թեորիական

¹ Համկ(բ)ի պատմութեան համառոտ գործնական, հայ. հրատ., էջ 48, 1938 թ.:

¹ Լենին, հ. IV, էջ 105:

ուսմունքը ծագել է բանվորական շարժման տարերային աճումից միանգամայն անկախ, ծագել է, վորպես հեղափոխական-սոցիալիստական ինտելիգենցիայի մտքի զարգացման բնական և անխուսափելի արդյունք: Այդ ժամանակում, վորի մասին խոսվում է, այսինքն՝ 90-ական թվականների կեսում, այդ ուսմունքն «Աշխատանքի Ազատագրություն» խմբի վոչ միայն արդեն լիովին ձևավորված ծրագրին եր, այլև նա իր կողմն եր նվաճել Ռուսաստանի հեղափոխական յերիտասարդության մեծամասնությանը¹:

Հետևապես, սոցիալ-դեմոկրատական հեղափոխական ինտելիգենցիայի խնդրին այն եր, վոր տարերայնորեն բարձրացող բանվորական շարժման մեջ սոցիալիստական դեմոկրատություն մտցնի, վոր Մարքսի—Ենգելսի դիտական թեորիան միացնի բանվորական շարժման հետ: Միայն այդ պայմանում կարող եր աճել մարքսիստական բանվորական կուսակցությունը: Լենինն իր կողմնակիցներից պահանջում եր, վոր նրանք լրջորեն զբաղվեն այն տաղանդավոր ագիտատորների, կազմակերպիչների և պրոպագանդիստների թեորիական գարգացումով, վորոնց առաջ է քաշում բանվորական շարժման տարերային վերելքը:

Լենինը պայքարում եր եսերների դեմ, վորոնք ինտելիգենցիային առաջ եյին քաշում վորպես պրոլետարիատի և դյուղացիության հետ համասար ինֆուրույն դասակարգային կատեգորիա:

«Յեթե դուք,—պարզաբանում եր Լենինը «Հեղափոխական ավանտյուրիզմ» հոդվածում—ինտելիգենցիային հակադրում եք պրոլետարիատին և դյուղացիությանը,—նշանակում ե, դուք նրա տակ հասկանում եք վորոշ սոցիալական շերտ, մարդկանց խումբ, վորոնք գրավում են նույնպիսի վորոշակի սոցիալական դիրք, ինչպես վորոշակի յե վարձու բանվորների և դյուղացիների սոցիալական դիրքը: Բայց վորպես այդպիսի շերտ ուսական ինտելիգենցիան հանդիսանում է հենց բուրժուական և մանր-բուրժուական ինտելիգենցիա: Այդ շերտի վերաբերմամբ միանգամայն ճիշտ է Գ. Ստրուվեն, վորն իր օրդանը անվանում է ուսական ին-

տելիգենցիայի օրդան: Իսկ յեթե դուք խոսում եք այն ինտելիգենտների մասին, վորոնք դեռ վոչ մի վորոշակի սոցիալական դիրք չեն գրավել կամ թե կյանքի կողմից արդեն դուրս են գցվել իրենց նորմալ դիրքից և անցնում են պրոլետարիատի կողմը,—այստ այդ ժամանակ միանգամայն անհեթեթություն է այդ ինտելիգենցիան հակադրել պրոլետարիատին: Պրոլետարիատը, ինչպես և արդի հասարակության յուրաքանչյուր այլ դասակարգ, վոչ միայն մշակում է իր սեփական ինտելիգենցիան, այլև վերցնում է իրեն կողմնակիցներ նաև բոլոր և ամեն տեսակի կրթված մարդկանց թվից»²:

Ռուսական ինտելիգենցիայի դեմոկրատական և հեղափոխական շարժման մեջ Լենինը տեսնում եր դասակարգային շահերի և քաղաքական խմբավորումների արտահայտությունն ու արտացոլումն ամբողջ հասարակության մեջ: Դրա համար, յերբ եսերները հարց եյին դնում մեկ ընդհանուր քաղաքական սլաոֆորմ ունեցող համառոտանողական կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտության մասին, Լենինն իր «Հեղափոխական յերիտասարդության խնդրները» հոդվածում մատնանշում եր այդ տեսակետի սնանկությունը:

«...Ինտելիգենցիան նրա համար ել ինտելիգենցիա յե կոչվում, վոր ամենից ավելի դիտակցորեն, ամենից ավելի վճռականորեն և ամենից ավելի ճշտորեն և արտահայտում և արտահայտում դասակարգային շահերի և քաղաքական խմբավորումների զարգացումը ամբողջ հասարակության մեջ»²:

Լենինն առաջ եր քաշում ամբողջ ուսական դեմոկրատական ինտելիգենցիայի յերեք հունի բաժանումն ըստ նրա քաղաքական դիրքերի՝ ազատագրողական, սոցիալիստ-հեղափոխական և սոցիալ-դեմոկրատական:

Կուսակցություն կազմակերպելու հարցի շուրջը սոցիալ-դեմոկրատիայի մենչևիկյան ոպորտունիստական թևի հետ ունեցած վիճաբանությունները ժամանակ Լենինը նշել է

¹ Լենին, Հ. V, էջ 154:

² Նույն տեղում, էջ 354:

¹ Լենին, Հ. IV, էջ 334—335:



մի գիծ, վորը հատուկ է ինտելիգենցիայի զգալի մասին, —
դա ինդիվիդուալիզմն է, անկայունությունը և ինքնուրույն-
նորեն կազմակերպվելու անընդունակությունը, վորոնք բըղ-
խում էյին ինտելիգենցիայի կյանքի պայմաններից, նրա ար-
տադրության պայմաններից (միայնակ կամ շատ մանր կո-
լեկտիվներում աշխատելը) :

Մեր ինտելիգենտի հենց այդ գծի մասին եր խոսում է Լե-
նինը Տրոցկու, Մարտովի, Ակսելրոդի և կոմպանիայի աղա-
յական, ինդիվիդուալիստական անարխիզմի դեմ, միշտ պայ-
քարի կապակցությամբ, վորոնք ամենից շատ հոգ էյին
տանում այն մասին, վոր չլինի թե կուսակցության կանո-
նադրությունը հեռ մղի փոքրեկ լիբերալ պրոֆեսորի: Լենի-
նը մատնանշում եր, վոր «պրոլետարիատի հեռ համեմա-
տած՝ ինտելիգենցիան միշտ ավելի ինդիվիդուալիստական և
յեղել արդեն չնորհիլ իր կյանքի ու աշխատանքի հիմնական
պայմանների, վորոնք նրան հնարավորություն չեն տալիս
լայն չափերով համախմբելու ուժերը, անմիջականորեն դա-
տիարակվելու կազմակերպված միատեղ աշխատանքի մեջ»¹:

Այստեղից—հաև կարգապահությանն ու կուսակցական
կյանքին հարմարվելու անկարողություն, այստեղից—անար-
խիստականություն, «ավտոնոմիայի» ձգտում, «հանդուրժո-
ղության» պահանջ և այլն:

Ռուսական առաջին հեղափոխության նախորդակին Լե-
նինը տալիս է այն փոփոխությունների ճիշտ պատկերը,
վոր բանվորական շարժումը մտցրեց ինտելիգենցիայի
քաղաքական աշխարհայացքի և քաղաքական խմբավորում-
ների մեջ:

«1901 թիվն է. բանվորը դնում է ուսանողին ոգնելու:
Սկսվում է ցուցաբերական շարժումը: Պրոլետարիատը փո-
ղոց է դուրս բերում իր կանչը՝ կորչի՝ ինքնակալությունը:
Ռադիկալ ինտելիգենցիան վերջնականապես տարաբաժան-
վում է լիբերալ, հեղափոխական-բուրժուական և սոցիալ-
դեմոկրատական ինտելիգենցիայի»²:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ բանվոր-

ների և ինտելիգենտների միջև գոյություն ունենալիք փոխ-
հարաբերությունների հարցը դրված եր ՌՄԴԲԿ III համա-
դումարում—բուլլետիյան համագումարում: III համագումար-
ը վճռականորեն դատապարտեց սոցիալ-դեմոկրատական
կազմակերպություններում բանվորների և ինտելիգենտների
միջև անվստահություն և թշնամություն սերմանելու փոր-
ձերը, վոր այն ժամանակ տանում էյին նոփոխկրթական-
ները: Համագումարը բանվորներին հիշեցրեց, վոր 90—ական
թվականներին և 900—ական թվականների սկզբին բանվորա-
կան շարժումն արդեն ապրել է «պայքարի նման պրիոմներ
կուսակցության ռաբոչեդեյական թևի կողմից», այսինքն՝
ոպորտունիստ—«եկոնոմիստների» կողմից, և վոր բանվոր
դասակարգը այդ պրիոմները մերժել է:

III համագումարի համար այդ հարցի վերաբերյալ դրած
բանաձևի նախագծում Լենինը խնդիր եր դնում սակեղծել
վորքան հնարավոր է ավելի շատ բանվորական կազմակեր-
պություններ, վորոնք մտնում են մեր կուսակցության մեջ.
ձգտել այն բանին, վոր այն բանվորական կազմակերպու-
թյունները, վորոնք չեն ցանկանում կամ հնարավորություն
չունեն մտնելու կուսակցության մեջ, դոնե հարեն կուսակ-
ցությանը. աշխատել զլուխ բերել՝ վորքան կարելի յե
ավելի շատ դեմակեց սոցիալ-դեմոկրատ բանվորներ մտնեն
կուսակցության կոմիտեների մեջ:

Հսկայական նշանակություն վերագրելով հեղափոխական
ինտելիգենցիայի առկայությանը բանվորական կուսակցու-
թյան մեջ, Լենինը մատնանշում եր, թե անհրաժեշտ է ամե-
նավճռական կերպով քննադատել գլխավորապես կադետների
հետեից դնացող լիբերալ բուրժուական ինտելիգենցիայի
դիրքերը: Լենինը նշավակեց հայտնի բուրժուական պատմա-
բան Վինոգրադովի յեյույթը, վորն արտահայտվել եր հո-
գուտ այն բանի, թե ցանկալի յե, վոր ուսական հեղափո-
խությունը զարգանա պրուսական և վոչ թե Ֆրանսական
որինակով: Լենինն այդ յեյույթը վորակեց վորպես ստորա-
քարչություն ցարիզմի առաջ, վորպես լիբերալ պրոֆեսորի
ցանկություն՝ համաձայնության դալու ցարիզմի հետ հեղա-
փոխության դեմ, այսինքն՝ հեղափոխական բանվորների և
գյուղացիների դեմ: Մինչև անգամ լիբերալ ինտելիգենցիա-

¹ Լենին, Կ. VI, հայ. հրատ., էջ 493:

² Լենին, Կ. VII, էջ 105:

յի ձախ թեւը—«Միությունների միութիւնը»—ամբողջ ժամանակ, ընդհուպ մինչև զեկտեմբերյան զինված ապստամբութիւնը, տատանվող դիրք եր դրավում, միմիայն առանձին զեպքերում զնալով պրոլետարիատի հետեւից (Բուլիդինյան դումայի բոյկոտը)։ Դեկտեմբերյան ապստամբութիւնից հետո լիբերալ ինտելիգենցիան առաջինը հետ ընկրկեց բուրժուազիայի կողմը։ Նրա հետեւից յերկշտորեն հետ ընկրկեց եսերական և մենչևիկյան ինտելիգենցիան։

Ռեակցիայի ժամանակաշրջանի համար բնորոշ է ինտելիգենցիայի փախուստը հեղափոխութիւնից, առանձնապէս հեղափոխական բանվորական կազմակերպութիւններից, սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնի շարքերից։ Յետ 1905—1906 թ. թ. ուսանողութիւնն առնվազն յերեք քառորդը պատկանում եր ձախ, սոցիալիստական կազմակերպութիւններին, ապա ռեակցիայի ժամանակաշրջանում ուսանողութիւն և ինտելիգենցիայի միայն աննշան խմբերը մնացին հավատարիմ հեղափոխութիւնը, նվիրված պրոլետարիատին։ Դա բոլշևիկյան ինտելիգենցիան եր, դա Լենինի և Ստալինի դաստիարակած պրոֆեսիոնալ հեղափոխականներն էին, վորոնք ռեակցիայի ժամանակաշրջանում իրենց վրա կրեցին պայքարի ամբողջ ծանրութիւնը։

Լենինը «Դուման և ռուսական լիբերալները» հոդվածում գրում եր․

«Բուրժուական ինտելիգենցիայի մեծ մասն ապրում ե նրանց հետ և կերակրվում նրանց մոտ, ուղքեր դեն են քաշվել քաղաքականութիւնից։ Ինտելիգենտներից միայն քչերն են զնում բանվորական կուսակցութիւնն պրոպագանդիստների խմբակները, վորոնք փորձից գիտեն ժողովրդական մասսաների «գայլի սովածութիւնը» քաղաքական դրքույկի, թերթի նկատմամբ և սոցիալիստական գիտութիւն նկատմամբ։ Բայց, իհարկե, այդպիսի ինտելիգենտները զնում են յետ վոչ զեպի հերոսական մահը, ապա իրոք զեպի վատ վարձատրվող, կիսաքաղց, միշտ գերհոգնած, մինչև անկարելիութիւնը քայքայված կուսակցական «չարքայինի» հերոսական տաժանակիր կյանքը։ Այդպիսի ինտելիգենցիային վորպէս վարձատրութիւն ծառայում ե այն, վոր նա ազատվել ե «հասարակութիւն» աղբակույտերից և

մոռացել ե մտածել նրա աուգիտորիայի՝ հասարակական-քաղաքական խնդիրների նկատմամբ ունեցած անտարբերութիւն մասին։ Իսկ չե վոր այն «ինտելիգենտը», վորը չի կարողանում իրեն համար գտնել այդ հարցերի նկատմամբ վոչ-անտարբեր աուգիտորիա, նույնքան ե նման «դեմոկրատի» և ինտելիգենտի բառիս լայ խմաստով, վորքան փողի նպատակով որինական ամուսնութիւն համար ծախված կինը նման ե սիրող կնոջը։ Թե՛ այստեղ և թե՛ այնտեղ—պաշտոնական—պատշաճ և միանգամայն լեզալ պրոստիտուցիայի հասարակ տարատեսակութիւններ են»¹։

Բայց, յետ ինտելիգենցիայի մի մասը մնաց բոլշևիկյան կազմակերպութիւններում, նվիրված լինելով պրոլետարիատին, ապա մենչևիկներին, լիկվիդատորներին, ուղղվիստներին, վպերյոդականների հետ կապված մանր-բուրժուական ինտելիգենցիան անձնատուր յեղավ միստիկային, աստվածաշինարարութիւնը և աստվածափորոնութիւնը, վճռականորեն հեռացավ հեղափոխութիւնից։ Այդ մանր-բուրժուական ինտելիգենցիան, ըստ Լենինի խոսքերի, «բերում ե սոցիալ-դեմոկրատական ուղուց կատարվող յուրաքանչյուր չեղման «մշակում» իրրե առանձին «ուղղութիւն», ինչպէս, որինակ, «ոտղովիղմը» և «լիկվիդատորութիւնը»²։

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ ինտելիգենցիայի ներսում պառակտումն ե՛լ ավելի յե սաստկանում և խորանում։ Վոչ միայն բուրժուազիան և կարվածատերերը, այլև այսպէս կոչված մանր-բուրժուական ինտելիգենցիան, վորը հարում եր արուղղովիկներին, ետերներին, մենչևիկներին, իր ճնշող մեծամասնութիւնը դարձավ պաշտպանողական, սոցիալ-չովինիստ, քարոզելով պատերազմ մինչև հալթական վախճանը, մասնակցութիւն ռազմարդիւնարեական կոմիտեներին և այլն։ Վոչ միայն բացահայտ պաշտպանողականները, այլ և այսպէս կոչված «ձախ» մենչևիկները, վորոնք վախենում եյին բացահայտ պաշտպանողական դիրք գրավելուց, ոժանդակում եյին ռուսական բուրժուազիայի բացահայտ դորձակալներին։

¹ Լենին, հ. XI, էջ 191—192։

² Լենին, հ. XIV, էջ 340։

«Բոլոր այդ «ձախ» նարոդնիկական-հսերական և մեն-
չևիկյան սոցիալ-դեմոկրատական խմբերը—Չերնովի խմբից
և մաքսիմալիստներից մինչև Մարտովի և Տրոցկու խում-
բը,—չնայած նրանց հեղափոխական Ֆրազեոլոգիային, ըստ
բանի ելուծյան ներկայացնում էին այն բուրժուական դե-
մոկրատիայի ձախ մանր-բուրժուական թիւը, վորը կապիտա-
լիզմի պահպանման և «բարեկաման» կողմ էր, վորովհետեւ
նրանք բոլորը ժխտում էին սոցիալիզմի հաղթանակի հնա-
րավորութիւնը Ռուսաստանում, հանդես էին գալիս Ռու-
սաստանի սոցիալիստական փոխակերպման դեմ, պահպա-
նում էին միասնականութիւն իմպերիալիստական պատե-
րազմի կողմնակից պաշտպանողականների հետ, հանդես
էին գալիս իմպերիալիստական պատերազմը քաղաքացիա-
կան պատերազմի փոխարկելու բոլշևիկյան լոզունգի դեմ,
ակտիվ պայքար էին մղում բոլշևիկյան քաղաքականու-
թյան դեմ, վորը ցարական կառավարութեան պարտու-
թիւնն էր ակնկալում իմպերիալիստական պատերազմում,
միասնական Ֆրոնտով պայքարում էին Լենինի կուսակցու-
թյան դեմ, բոլշևիկյան կուսակցութեան դեմ:

Միակ հեղափոխական պրոլետարական-սոցիալիստական
կուսակցութիւնը Ռուսաստանում բոլշևիկների կուսակցու-
թիւնն էր»¹:

Իմպերիալիստական պատերազմի տարիներին հեղափո-
խական ինտելիգենցիայի միայն աննշան մասը հալատարիմ
գտնուեց պրոլետարիատին, նրա բոլշևիկյան կուսակցութեա-
նը: Ինտելիգենցիայի այդ մասը, Լենինի դեկավարութեամբ,
բանվոր դասակարգի լավագույն մասի հետ միասին, պայ-
քար էր մղում սոցիալ-չովինիզմի դեմ, ինքնակալութեան
դեմ, հանուն նրա տապալման, հանուն իմպերիալիստական
պատերազմը քաղաքացիականի փոխարկելու, հանուն սո-
ցիալիստական հեղափոխութեան հաղթանակի:

Յեկավ 1917 թիվը: Բանվոր դասակարգն ու գյուղա-
ցիութիւնը տապալեցին ցարիզմը: Փետրվարի և Հոկտեմ-
բերի միջև ընկած ժամանակաշրջանում ինտելիգենցիայի
զգալի մասսաները վոչ թե բոլշևիկներին էին պաշտպա-

նում, այլ համաձայնողական կուսակցութիւններին: Հին
ինտելիգենցիայի հսկայական մասսան դեպի պրոլետարական
սոցիալիստական հեղափոխութիւնը տածում էր կամ անվըտ-
տահութիւն կամ թշնամութիւն: Լինելով բուրժուազիային
և համաձայնողական կուսակցութիւններին դերի, նա չէր
հալատում պրոլետարիատի ստեղծագործական ուժերին,
սոցիալիզմի հաղթանակի հնարավորութեանը: Իր մեծամաս-
նութեամբ հին ինտելիգենցիան յերազում էր «կարգավոր-
ված» բուրժուական հանրապետութեան մասին, նա դրանից
դենք չէր զնում:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութեան
հաղթանակից հետո ինտելիգենցիայի զգալի ջոկատներ, այդ-
թիւում անդամ ուսուցիչների միութիւնը, մասնակցեցին
խորհրդային իշխանութեան դեմ ուղղված դանազան տեսակի
բողոքներին, գործադուլներին և սաբոտաժին: Գիտութեան
մարդկանցից միմիայն շատ քչերը միանգամից հարեցին պրո-
լետարական շարժմանը: Այնպիսի դիտնականներ, ինչպես
սկադեմիկոս Տիմիրյազևը, վոր պատկերացված է «Բալտիկի
դեպուտատը» կինոֆիլմի մեջ հանձին պրոֆեսոր Պրեժայեվի,
այն ժամանակ համարյա միայնակներ էին ինտելիգենտա-
կան միջավայրում: Բարձրագույն զարոցում գործում էին
կադետներն ու ռիտյարերիտները: Տարբական և միջնակարգ
զարոցը զգալի չափով դառնում էր կադետների, եսերների
և մենչևիկների ձեռքում:

Բոլշևիկները վոչ մի իլլյուզիա չէին կառուցում հեղա-
փոխութեան մեջ ինտելիգենցիայի կիբառելիք գործելակեր-
պի վերաբերմամբ: Բոլշևիկները դիտեցին, վոր ինտելիգեն-
ցիայի զգալի մասն իր դասակարգային կազմի և բազմամյա
տրադիցիաների գորութեամբ կտատանվի պրոլետարիատի և
բուրժուազիայի միջև: Ինտելիգենցիայի սարտաժը հրա-
հրվում էր կապիտալիստների և կալվածատերերի ու նրանց
գործակալների—մենչևիկների, եսերների, II Ինտերնացիո-
նալի սոցիալ-դեմոկրատական թեորետիկների կողմից: Այն
նրանք առաջ էլ էին գրում, թե պրոլետարիատը չի պահել
իշխանութիւնը, վորովհետեւ նա չունի բալականաչափ քա-
նակութեամբ յերկրի կառավարումը կարգավորելու ընդու-
նակ կուլտուրական և վարչական կադրեր:

¹ История гражданской войны в СССР, т. I, кн. 20, 1938 г.:

Պրոլետարիատն իսկապես պատրաստված կաղերք չառքիչ ուներ։ Այս խնդրում չարաչափություն ելին անում մեն-շնիկները և մենշնիկացած կապիտուլանտները—Զինովյեվը, Կամենևիվը և ուրիշները, վորոնք իրենց ունեղատությունը, իրենց դավաճանելը սոցիալիզմին քողարկում ելին այն պատիկ թերիաներով, թե նախ պետք ե իր սոցիալիստա-կան ինտելիգենտական կաղերքը պատրաստել, իսկ հետո միայն իշխանութունը վերցնել։ Լենինն այդ համարում եր դտարյուն ոպորտունիզմ։ Նմանորինակ դատողութունները Լենինը բազմիցս յենթարկել ե կծու, սուր քննադատու-թյան։ Նա գրում եր․

«Սոցիալիզմի կառուցման համար,—ասում եք դուք,—պահանջվում ե քաղաքակրթվածութուն։ Շատ լավ։ Իսկ ինչո՞ւ մենք չեյինք կարող նախ ստեղծել մեզ մոտ քաղա-քակրթվածության այնպիսի նախադրյալներ, ինչպես կալ-վածատերերի վտարումն ե և ուսաստանյան կապիտալիստ-ների վտարումը, իսկ հետո արդեն սկսել շարժում դեպի սոցիալիզմը։ Վո՞ր դրքույկներում եք կարդացել դուք, վոր սովորական պատմական կարգի այդպիսի ձևավորումներն անթույլատրելի յեն կամ անհնարին»¹։

Ինտելիգենցիայի սարսուռը շատ սուր գենք եր հին աշխարհի ձեռքին, բուրժուազիայի ձեռքին խորհրդային իշ-խանության դեմ․ նա ժողովրդի դեմ, խորհրդային պետու-թյան դեմ դասակարգային թշնամու մղած պայքարի ամե-նաբնորոշ ձևերից մեկն եր։

Սորհրդային իշխանության առաջ ծառացավ դժվարա-դույն խնդիր—իր կողմը դրավել հին ինտելիգենցիայի հըս-կայական մասսային։ Լենինը համբերատարությամբ բացա-տրում եր նրան, վոր միայն սոցիալիզմն ե տալիս դիտու-թյանը լայն ասպարեզ, ադատում նրան, ադատադրում բուրժուական կապանքներից։ Ժողովրդական անտեսության խորհուրդների համառուսական I համագումարում Լենինն ասում եր․

«Յեթե մենք վերընթերցենք այն սոցիալիստների յերկե-րը, վորոնք վերջին կես դարի ընթացքում դիտել են կապի-

տալիզմի դարգացումը և կրկին ու կրկին անգամ այն յեղ-րակացությանը յեկել, թե սոցիալիզմն անխուսափելի յե, ապա նրանք բոլորն առանց բացառության մատնանշել են այն բանի վրա, վոր միայն սոցիալիզմը կադատի դիտու-թյունը նրա բուրժուական կապանքներից, նրա՝ կապիտալին ստրուկ լինելուց, նրա՝ ահեղ կապիտալիստական շահասի-րության հանդեպ ցուցաբերած ստրկութունից»¹։

Սորհրդային պետութունը ստեղծեց բոլոր անհրաժեշտ բաները, վորպեսզի իր կողմը դրավի հին ինտելիգենցիա-յին։ «Սորհրդային իշխանության հերթական խնդիրները» հողվածի ուրվագրում, 1918 թ. դարնանը, քաղաքացիական պատերազմի ամենայեռուն ժամանակ, Լենինը գրել եր, վոր «բուրժուական ինտելիգենցիային աշխատանքի ներգրա-վելը ներկայումս որմա հերթական հասունացած և անհրա-ժեշտ խնդիրն ե»²։

Լենինը նախատեսում եր, վոր բանվորները և գյուղա-ցիների մի մասը, հաշվի առնելով հին ինտելիգենցիայի ցուցաբերած սարսուռը, մանավանդ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին շաբաթներին և ամիսներին, թըշ-նամաբար կվերաբերվի խորհրդային իշխանության այս քայլին, այն կհասկանա վորպես դիմում բուրժուազիային, և դրա համար նա հենց այդտեղ ել պարզաբանում ե․

«Ձե վոր անգամ հետամնաց Ռուսաստանում Կոլուպա-յեվները և Ռադուկայեվները կողքին աճեցին ու բազմացան կապիտալիստներ, վորոնք կարողացան իրենց ծառայեցնել մենշնիկյան, եսերական, անկուսակցական կուլտուրական ինտելիգենցիային։ Մի՞թե մենք այդ կապիտալիստներից ավելի հիմար դուրս կդանք և չենք կարողանա ոգտադոր-ծել այդպիսի «չինարարական նյութը» կոմունիստական Ռուսաստանի կառուցման համար»³։

Լենինը յուրաքանչյուր դեպքից ոգտվում եր, վորպեսզի ընդգծի ինտելիգենցիայի հսկայական դերը սոցիալիստա-կան պետության մեջ։ 1918 թ. հունիսի 5-ին յեկույթ ունե-

¹ Լենին, հ. XXIII, էջ 41։

² Լենին, հ. XXII, հայ. հրատ., էջ 546։

³ Լենին, հ. XXIII, էջ 459։

¹ Լենին, հ. XXVII, հայ. հրատ., էջ 532։

նախով ինտերնացիոնալիստ ուսուցիչներին համառոտական համադրումարում, Լենինը ասում էր.

«Ուսուցչական բանակը պետք է իրեն վիթխարի յուսավորական խնդիրներ դնի և ամենից առաջ պետք է դառնա սոցիալիստական լուսավորության գլխավոր բանակը»¹:

Ո՞վ էր խանդարում այն ժամանակ ուսուցիչներին և ինտելիգենցիայի ուրիշ նույնպիսի ջոկատներին, ինչպես, որինակ, բժիշկներին, ինժեներներին, տեխնիկներին, դյուղատնտեսներին, վորոնք իրենց բուն իսկ բնությամբ մոտ էյին աշխատավորներին, մտնել սոցիալիստական շինարարության մեջ: Դրան առանձնապես խանդարում էյին եսերները, նաբողնիկները, կադեաները: Նրանք ամեն կերպ աշխատում էյին համոզել ինտելիգենցիայի այդ ջոկատներին, վոր խորհրդային իշխանության որերը հաշված են, վոր խորհրդային իշխանությունը հարատե չե, վոր դա «ուզուրպատորներ» են, վորոնց շուտով պետք է փոխարինի սոցիալ-դեմոկրատիան, և, անկասկած, ինտելիգենցիայի գլխավոր մասսաներին նրանք ամենահսկայական փնատ հասցրին, խանդարեցին նրան ճշտորեն վորոշել իր վերաբերմունքը խորհրդային իշխանության հանդեպ, սոցիալիստական հեղափոխության հանդեպ և մտնել սոցիալիզմի կաուցման մեջ:

Լենինն անդադար կրկնում էր, վոր հին ինտելիգենցիայի վիթխարի մասսաները կարող են և պետք է այժմ եեթ մտնեն սոցիալիստական շինարարության մեջ վոչ միայն ըստ իրենց պրոֆեսիայի, այլև այս բառի անհամեմատ ավելի լայն իմաստով, դառնան նոր հասարակության ակտիվ կաուցողներ:

Լենինն ինտերնացիոնալիստ ուսուցիչներին ասում էր.

«Ուսուցչությունը պետք է ձուլվի աշխատավորների ամբողջ պայքարող մասսայի հետ: Նոր մանկավարժության խնդիրն է—կապել ուսուցչական դործունեյությունը հասարակության սոցիալիստական կազմակերպման խնդրի հետ»²:

Բայց առանձնապես տեխնիկական ինտելիգենցիայի

չրջադարձը դեպի խորհրդային իշխանություն վոչ այնպես արագ էր կատարվում, ինչպես կուսակցությունն էր ռզում:

Կոչ անելով բոլեխիկներին՝ ոգնել ինտելիգենցիային ավելի արագ և ավելի անհիմանդադին վերացնելու հին իլլուզիաները, Լենինը բացառիկ զգայնությամբ էր ուսումնասիրում նրա շարքերում տեղի ունեցող շերտավորման պրոցեսը: «Ի՞նչպես կազմակերպել մրցակցությունը» հոգվածում Լենինը գրում էր.

«Առանց մեզ յոլա չեն գնա»—մխիթարում են իրենց այն ինտելիգենտները, վորոնք սովոր են ծառայել կապիտալիստներին և կապիտալիստական պետությանը: Նրանց լպիրը հաշիվները չեն արդարանա. կրթված մարդիկ հենց այժմյանից դատվում են, անցնելով ժողովրդի կողմը, աշխատավորների կողմը, ոգնելով կոտրել կապիտալի ծառաների գիմադրությունը»¹:

Հայտնի ալ եսեր Պիտիրիմ Սորոկինը 1918 թ. նոյեմբերի 20-ին «Правда»-յում մի նամակ տպեց ալ եսերների կուսակցությունից իր դուրս գալու մասին և Սահմանադիր Ժողովի անդամության կոչումից հրաժարվելու մասին: Եսերների կուսակցությունից իր դուրս գալը Պիտիրիմ Սորոկինը բացատրում էր նրանով, թե նա համոզվել է, վոր գիտության և ժողովրդական լուսավորության բնագավառում կատարվող աշխատանքը միշտ ոգտակար է, միշտ հարկավոր է ժողովրդին: Ի պատասխան դրան Լենինը հենց հետեյալ որը «Правда»-յում գետեղեց «Պիտիրիմ Սորոկինի արժեքավոր խոստովանությունները» հոգվածը, վորի մեջ ցույց էր տալիս, թե Սորոկինի նամակը բնորոշ է վորպես հին ինտելիգենցիայի մի մասի՝ դեպի խորհրդային իշխանությունը կատարած վորոշ չրջադարձի նշան: Լենինը գրում էր.

«Պետք է կարողանալ դեպի մեզ գրավել, բնդհանուր կազմակերպության մեջ մտցնել, համապրոլետարական կարգապահության յենթարկել աշխատավորների ամենից ավելի քիչ պրոլետարական, ամենից ավելի շատ մանր-բուրժուա-

¹ Լենին, հ. XXIII, էջ 93:

² Նույն տեղում:

¹ Լենին, հ. XXII, հայ. հրատ., էջ 201:

կան այն խավերին, վորոնք մեր կողմն են դառնում: Այս-
տեղ մոմենտի լողունդն է՝ վոչ թե պայքարել նրանց դեմ,
այլ զբաղել նրանց, կարողանալ ազդել նրանց վրա, համո-
զել տատանվողներին, ոգտադործել չեզոքներին, մաստա-
կան պրոլետարական ազդեցությամբ դառնալով նրանց,
ովքեր հետ են մնացել կամ հենց նորեքս են սկսել ազատվել
«ուչրեդիական» կամ «հայրենասիրական-դեմոկրատական»
իլլյուզիաներից»¹:

1918 թ. նոյեմբերի 27-ին Մոսկվայում կայացած կու-
սակցական աշխատողների ժողովում Լենինը ասում էր, վոր
մենք չպետք է յերես դարձնենք այն մարդկանցից, վորոնք
սկսում են դիտակցել իրենց սխալը: Դեռ ավելին, Լենինն
ուղղակի հարց էր դնում այդ ինտելիգենցիայի հետ համա-
ձայնության դայու մասին, նրա հանդեպ ունեցած վերա-
բերմունքը լիովին փոխելու մասին: Յեթե սարսափ անող
և հեղափոխությանն ոգնող ինտելիգենցիայի հանդեպ
անխնա պայքարն էր լողունդ հանդիսանում, ապա այն ին-
տելիգենցիայի հանդեպ, վորը դարձ էր կատարում զեպի
խորհրդային իշխանությունը, վերաբերմունքը պետք է
միանգամայն այլ լիներ:

«Մենք պետք է ասենք՝ համեցեք, մենք ձեզանից չենք
վախենում, յեթե դուք կարծում եք, թե մենք կարողանում
ենք ազդել միմիայն բռնությամբ, ապա դուք սխալվում եք,
և մենք կկարողանայինք համաձայնության հասնել: Յեւ
այն տարրերը, վորոնք լի յեն բուրժուական նախապաշար-
մունքների տրագիցիաներով, բոլոր կոոպերատորները, աշ-
խատավորների բոլոր այն մասերը, վորոնք ամենից ավելի
յեն կապված արտադրության և այն բուրժուական պրոֆե-
սիաների վորոչ չըջանի հետ, վորոնք կապիտալիստական
հասարակության մեջ անհրաժեշտ են, իսկ սոցիալիստական
հասարակության մեջ մենք նրանց դեն կղցենք, նրանք բո-
լորն ընդառաջ կդնային մեզ: Վերցրեք ամբողջ ինտելիգեն-
ցիան: Նա ապրում էր բուրժուական կյանքով, նա սովոր է
վորոչ հարմարությունների: Քանի նա տարուբերվում էր
չեխո-սլովակների կողմը, մեր լողունդն էր անխնա պայ-
քար—տեռոր:

Աչքի առաջ ունենալով, վոր հիմա մանր-բուրժուական
մասսաների տրամադրության մեջ այդ չըջալարձը հասել
է, մեր լողունդը պետք է լինի համաձայնության դալ, ող-
տադործել այդ հարաբերությունները դործնականում, բայց
վոչ թե բռնությունների միջոցով, այլ բարի-դրացիական,
դաշնակցային հարաբերությունների միջոցով»²:

Լենինը չէր հավատում ամբողջ հին ինտելիգենցիայի՝
կոմունիզմի ուղու վրա անցնելու հնարավորությանը: Բայց
նա հնարավոր էր համարում «այդ ինտելիգենցիային ող-
տադործել սոցիալիզմի համար, այն ինտելիգենցիային, վո-
րը սոցիալիստական չէ, վորը յերեք չի լինի կոմունիստա-
կան, բայց վորին այժմ դեպքերի և հարաբերակցություն-
ների ողբկտիվ ընթացքը տրամադրում է մեր նկատմամբ
լինել չեզոք և դրացիական»²:

Վորոնեժի գյուղատնտեսական ինստիտուտի պրոֆեսոր
Մ. Դուկելսկին 1919 թ. մարտին բաց նամակով դիմեց Լե-
նինին: Կարգալով «Известия»-յում Լենինի գեկուցումը
մասնագետների մասին, նա վրդովվել էր այն բանից, վոր
իր թե խորհրդային իշխանությունը ուզում է «կաշառել»
ինտելիգենցիային «անասնական բարեկեցության» հեռա-
նկարով: Դուկելսկին հավատացնում էր, վոր շատ մասնա-
գետներ չեն դնում աշխատելու կոմունիստների հետ միմի-
այն նրա համար, վոր, իր թե, արդեն շատ ու շատ են այն
խցկվածները, անխիղճ «ուղեկիցները», վորոնք միասին են
դնում աղնիվ կոմունիստների հետ: «Յեթե դուք ուզում
եք,—դրում էր Դուկելսկին,—վոր ունենաք վոչ ոռճկի հա-
մար ծառայող «մասնագետներ», յեթե դուք ուզում եք, վոր
նոր աղնիվ կամավորներ միանան այն մասնագետներին,
վորոնք հիմա էլ տեղ—տեղ աշխատում են ձեզ հետ վոչ թե
յերկյուղից դղոված, այլ խղճմտամբով, չնայած շատ հար-
ցերի նկատմամբ ձեզ հետ ունեցած սկզբունքային տարա-
ձայնությանը... չնայած յերեմն ամենակենդանի ձեռնար-
կումները խորտակող շատ խորհրդային հիմնարկների անո-
րինակ բյուրոկրատական խառնաշփոթությանը, յեթե դուք
ուզում եք այդ, ապա, ամենից առաջ, մաքրեցեք ձեր կու-

¹ Լենին, հ. XXIII, էջ 204:

² Լենին, հ. XXIII, էջ 317—318:

² Նույն տեղում, էջ 320:

սակցութիւնը և ձեր կառավարական հիմնարկներն անբարեխիղճ Mitläufer-ներից (ուղեկցողներից—Խմբ.), միջոցներ ձեռք առեք այդպիսի զոմիտղների, արկածախնդիրների, պոչերի և բանդիտների դեմ, վորոնք, քողարկվելով կոմունիզմի դրոշակով, կամ ստորաբար թալանում են ժողովրդական սեփականութիւնը, կամ հիմարաբար իրենց անհետեւ կազմալուծիչ քաշկոտուքով տակից կտրում են ժողովրդական կյանքի արմատները»:

Լենինն այս նամակին պատասխանեց 1919 թ. մարտի 28-ի «Правда»-յի № 67-ում: Լենինը գտնում էր, վոր Դուկեկուկու նամակը, թեպետ և զայրույթ է արտահայտում, բայց, ըստ յերևութին, անկեղծ է: Յեւ թեպետ հեղինակի մոտ, անկասկած, դերակշռում էր անձնական զայրույթը, վոր խանդարել էր նրան հարցը ճիշտ դնել, այնուամենայնիւ, Լենինն անհրաժեշտ էր համարում այդ հարցի առթիւ բացատրվել:

Ամենից առաջ Լենինը ցույց էր տալիս, վոր չի կարելի հին ինտելիգենցիայի սարսուռի համար մեղքը կոմունիստների վրա գցել:

«Ասորոտաժը սկսվեց այն ինտելիգենցիայի և չինովնիկութան կողմից, վորոնք մեծ մասամբ բուրժուական և մանր-բուրժուական են: Այս արտահայտութիւնները պարունակում են դասակարգային բնույթ, պատմական դնահատական, վորը կարող է ճիշտ կամ անճիշտ լինել, բայց վորը բնավ չի կարելի նախատող խոսքի կամ հայհոյանքի տեղ ընդունել: Բանվորների և զյուզացիների գաղազումն ինտելիգենցիայի սարսուռի համար անխուսափելի չէ, և յեթե կարելի չէ մեկին «մեղադրել», ապա միայն բուրժուազիային և նրա կամավոր և ակամա աջակիցներին:

Յեթե մենք «գրգռելինք» «ինտելիգենցիայի» դեմ, հարկ էր, վոր մեզ դրա համար կախելին: Բայց մենք վոչ միայն ժողովրդին չէինք դրդում նրա դեմ, այլ կուսակցութեան անունից և իշխանութեան անունից քարոզում էինք ինտելիգենցիային աշխատանքի լավագույն պայմաններ տրամադրելու անհրաժեշտութիւնը»¹:

Արժանի չէ ուշադրութեան, վոր հետագայում պրոֆեսոր Դուկեկուկին, հասկանալով, թե վորն է իր սխալը և վորն է բուլշևիկների ճշմարտութիւնը, մտաւ Համգ(բ)ի շարքերը:

Յերեք ու անց, 1919 թ. մարտի 30-ին, Համառուսական Կենտգործկոմի նիստում, խոսելով Միխայիլ Իվանովիչ Կալինինի թեկնածութեան մասին Համառուս. Կենտգործկոմի նախագահի պաշտոնի համար՝ Յակով Միխայիլովիչ Սվեդլովի մահից հետո, Լենինը նորից վերադարձաւ այդ հարցին:

«Մենք դիտենք,—ասում էր նա,—վոր ամեն ինչ անում էյինք ինտելիգենցիային դրաւելու համար, բայց մեզ բաժանում էյին քաղաքական տարածայնութիւնները: Մենք գիտենք, վոր բուրժուական պառլամենտարիզմի դարաշրջանը վերջացել է, վոր ամբողջ աշխարհի բանվորների համակրանքը Սորհրդային իշխանութեան կողմն է, վոր, ինչքան եւ բուրժուազիան սպանի պրոլետարիատի առաջնորդներին, ինչպես նա այդ անում է Գերմանիայում,—Սորհրդային իշխանութեան հաղթանակն անխուսափելի չէ: Ամբողջ փորձն ինտելիգենցիային անխուսափելիորեն վերջնականապես կրելի մեր շարքերը, և մենք կստանանք այն նյութը, վորի միջոցով մենք կարող ենք կառավարել»¹:

Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում շատ սուր կերպով էր դրված զինվորական մասնագետների հանդեպ ունենալիք վերաբերմունքի հարցը: Հին ցարական բանակի մասնագետների զգալի մասը քոչեց սպիտակ-գլարդեականների և ինտելիգենտների լագերը: Զինվորական մասնագետների մի մասը, վորին հովանավորում էր մատնիչ Տրոցկին, նրա հետ միասին և նրա ցուցումով դավաճանում էր Սորհրդային իշխանութեանը, մասնում Կարմիր Բանակին: Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը դեռ չէր կարողացել կոփել բավականաչափ քանակութեամբ իր սեփական զինվորական մասնագետները: Տրոցկու և նրա ազդեցութեան տակ զանազան զինվորական մասնագետների դեմ մղված պայքարում և հակառակ նրանց Կարմիր Բանակը

¹ Լենին, հ. XXIV, էջ 189:

² Լենին, հ. XXIV, էջ 186:

ստեղծվեց Լենինի, Ստալինի, Վորոշիլովի, Ֆրունզեյի, Ջերժինսկու և այլ յերկաթե բոլշևիկների, զինվորական զործի տաղանդավոր կազմակերպիչների և քաղաքական ղեկավարների կողմից:

Խորհուրդների Համառուսական VII համագումարում Լենինը մատնանշում էր, վոր Կարմիր Բանակում, անկասկած, անհրաժեշտ և ոգտադործել բուրժուական մասնազետներին:

«Մենք զիտենք,—ասում էր Լենինը,—վոր այդ բուրժուական մասնազետները վիթխարի մեծամասնությամբ մեր դեմ են,—և սկսեք ե վիթխարի մեծամասնությամբ մեր դեմ լինեն,—վորովհետև այստեղ արտահայտվում է նրանց բնությունը, և այդ մասին մենք վոչ մի կտակած չենք կարող ունենալ: Մեզ դավաճանում էյին այդ մասնազետներից հարյուրավորներն ու հազարավորները, իսկ ավելի ու ավելի էյին հավատարիմ ծառայում տասնյակ ու տասնյակ հազարավորները, նրա համար, վոր հենց կովի բնթացքում նրանք դրավվում էյին մեր կողմը, նրա համար, վոր այն հեղափոխական խանդավառությունը, վորը հրաչքներ էր գործում Կարմիր Բանակում, բղխում էր այն բանից, վոր մենք սպասարկում և բավարարում էյինք բանվորների և դյուղացիների շահերը: Միահամուռ գործող բանվորների և դյուղացիների մասսայի այդ իրադրությունը, վորոնք զիտեն, թե ինչու համար են իրենք կովում, անում էր իր գործը, և այն մարդկանց ավելի ու ավելի մեծ մասը, վորոնք ուրիշ լազերներից մեր կողմն էյին անցնում, յերբեմն անդիտակցարար, դառնում էր և դառնում է մեր զիտակից կողմնակիցը»¹:

Լենինն ու Ստալինը կուսակցության VIII համագումարում հակահարված տվին այսպես կոչված զինվորական բաղդիցիային և միջազգային շարժման մեջ գոյություն ունեցող այն «ձախ» տարրերին, վորոնք բացասաբար էյին վերաբերվում բուրժուական մասնազետներին սոցիալիստական շինարարության մեջ զբաղելուն:

Քաղաքացիական պատերազմն ավարտվեց, բայց դասա-

կարգային պայքարը շարունակվում էր նոր ձևերով: Սոցիալիստական շինարարության դժվարությունները, միջազգային կապիտալիստական շրջապատումն արտահայտություն էյին դառնում նաև ինտելիգենցիայի վրա:

Սոցիալիզմի ծախալուն հարձակումը նշանակում էր հին, շահագործող աշխարհի բոլոր միացորդների անխուսափելի խորտակում մեր յերկրում: Սոցիալիզմը թափանցում էր մեր յերկրի ամենախուլ անկյունները: Բանվորները և դյուղացիներն արի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ համարձակ վերակառուցում էյին եկոնոմիկան, կենցաղը, կուլտուրան, փոխում յերկրի աշխարհագրությունը: Աստիճանաբար փոխվում էր նաև մարդկանց զիտակցությունը: Սոցիալիզմի հարձակումը դասակարգային թըշնամու կատաղի դիմադրություն էր առաջ բերում յերկրի ներսում և յերկրից դուրս: Միջազգային կապիտալիզմը չեր ուզում կորցնել իր վերջին հենարանը ԽՍՀՄ ներսում:

Կուսակցությունն ինտելիգենցիայի առաջ բաց էր անում պատմության մեջ չտեսնված ստեղծագործական, շինարար աշխատանքի անընդդրկելի հեռանկարներ: Նա կոչ էր անում հին ինտելիգենցիային՝ դնացեք բանվորների և դյուղացիների հետ միասին, ստեղծեք նոր կյանք: Դուք ձեր դաստիարակությամբ և գործունեյության բնույթով հանգիստանում եք ստեղծագործող աշխատողների: Միմիայն խորհրդային իշխանությունը կարող է լիակատար ադատություն տալ ձեր տաղանդների զարգացմանը: Կապիտալիզմն իր ամբողջ սխտեմի կրիդիսն է ապրում: Դա նեխող աշխարհ է: Ձեր ճանապարհը նրա հետ չէ: Միայն զիտության և աշխատանքի դաշինքը կարող է հրաչքներ գործել: Այդ դաշինքը ամենագոր է:

Բայց, մյուս կողմից, հին աշխարհի բոլոր ուժերը, այդ թվում դատարարակության, սովորությունների, տրադիցիաների ուժը,—վորի մասին Լենինն ասում էր, թե դա ամենասարսափելի ուժ է,—վրտքի յեկան սոցիալիզմի դեմ: Թշնամիները քրքլում էյին առանձին անհաջողությունների առթիվ, չարաչահում էյին սոցիալիզմի կառուցման դժվարություններով, մարգարեանում էյին, թե ինտելիգենցիան անխուսափելի յէ:

¹ Լենին, հ. XXIV, էջ 605:

Նրանք ուռցնում էին «մասնավորակերության» առանձին գեղերը, վորի դեմ կուսակցությունը միշտ պայքարում էր և վորի մասին ընկ. Ստալինն ասում էր. «Մասնավորակերությունը» մեղանում միշտ համարվել է և մնում է վնասակար ու ամբթալի յերևույթ»¹:

Ժողովրդի թշնամիները, վորոնք սողոսկել էին կուսակցության մեջ և խորհրդային իշխանության որդանները, ոտաբերկրյա լրտեսների, դավերասանների և մարդասպանների հետ միասին ինտելիգենցիայի թշնամական, տատանվող և անկայուն տարրերին հավաքագրում էին իրենց շարքերը:

Հին ինտելիգենցիայի մեջ տարածված էին ինդիվիդուալիզմը, կարգերիզմը, ամեն տեսակի թեօրիաներ ինտելիգենցիայի հատուկ միտիայի մասին, նկատվում էին անցումներ դեպի անկումայնություն և հուսահատություն: Այդ բոլորից վարպետորեն ոգտվում էին թշնամիները:

Ինտելիգենցիայի այն շերտավորումը, վորն սկզբեց խորհրդային իշխանության դեռ առաջին տարիներին, շարունակվեց արագացված տեմպերով: Կյանքը սուր կերպով դնում էր «ով—ու՞մ» հարցը: Պեռք էր ընտրել, բարեկազմ վոր կողմում կանգնել:

Հին, բուրժուական ինտելիգենցիայի վերնախավը դեռադասեց կանգնել վնասարարության ուղու վրա—խորհրդային իշխանության դեմ ողտադործել դասակարգային թշնամու դիմադրության ամենավտանդամոր ձևերից մեկը: Նա մասնակցեց հակահեղափոխական, տեոորիստական, դեփերսիոն և լրտեսական այնպիսի կազմակերպությունների ստեղծմանը, ինչպես Կոնդրատյովի—Չայանովի «աշխատավորական գյուղացիական կուսակցությունը», ինչպես «առևտրաարդ»-ը և այլն. նրա ներկայացուցիչները հանդես էին գալիս Շախտիի հայտնի պրոցեսում և այլն:

Հին ինտելիգենցիայի մեծ մասը վերջիվերջո սկսեց անպայմանորեն բացասաբար վերաբերվել վնասարարությանը: Բուլժեիկյան ճգնարտությունը և ստեղծագործական աչ-

խատանքը հրապուրում էին տատանվողներին, վերամշակում էին նրանց, հաղթահարելով կապիտալիզմի մնացորդներն այդ մարդկանց գիտակցության մեջ:

1931 թ. հունիսի 23-ին տնտեսավարների խորհրդակցությանն արտասանած ճառում ընկեր Ստալինն ասում էր.

«Մի-յերկու տարի առաջ մեղանում բանն այնպես էր, վոր տեխնիկական հին ինտելիգենցիայի ամենից ավելի վորակյալ մասը վարակված էր վնասարարության հիվանդությամբ: Դեռ ավելին. վնասարարությունն այն ժամանակ մի տեսակ մոդա յեր: Վոմանք վնասում էին, մյուսները թաղցնում էին վնասարարներին, յերրորդները ձեռքերն էին լվանում և չեղոքություն էին պահպանում, չորրորդները տատանվում էին խորհրդային իշխանության ու վնասարարների միջև: Իհարկե, տեխնիկական հին ինտելիգենցիայի մեծամասնությունը շարունակում էր շատ թե քիչ լոյալ աշխատել: Բայց այստեղ խոսքը վո՛չ թե մեծամասնության մասին է, այլ տեխնիկական ինտելիգենցիայի ամենից ավելի վորակյալ մասի»¹:

Վնասարարության այդ հիվանդությանն աջակցում էին՝

«դասակարգային պայքարի սրումը խՍՀՄ ներսում, խորհրդային իշխանության հարձակողական քաղաքականությունը քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի վերաբերմամբ, այս վերջինների դիմադրությունը խորհրդային իշխանության քաղաքականությանը, միջադպիսի դրության բարդությունը, կոլտնտեսային ու խորհանտեսային շինարարության ղեկավարությունները: Յեթե վնասարարները մարտական մասի ակտիվությունն ամրապնդվում էր կապիտալիստական յերկրների իմպերիալիստների ինտերվենցիոնիստական խաղերով և յերկրի ներսում հացի հարցում յեղած ղեկավարություններով, ապա տեխնիկական հին ինտելիգենցիայի մյուս մասի տատանումները դեպի ակտիվ վնասարարների կողմն ուժեղանում էին տրոցկիստական մենչևիկյան շաղակրատների մոդայական դրոյցներով այն մասին, թե՛ «կոլտնտեսություններից ու խորհանտեսություն-

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., էջ 680:

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., էջ 581—582:

ներից, միեւնույն է, վոչինչ գուրս չի դա», «Խորհրդային իշխանությունը, միեւնույն է, վերասերում է և պետք է շուտով ընկնի», «բուլղերիկներն իրենց քաղաքականութեամբ իրենք են նպաստում ինտերվենցիային» և այլն և այլն...

Հասկանալի չէ, վոր Խորհրդային իշխանությունն իրերի այս դրութեան ժամանակ կարող եր լոկ մի միակ քաղաքականություն կիրառել տեխնիկական հին ինտելիգենցիայի վերաբերմամբ—ակտիվ վնասարարներին ջախջախելու, չեզոքներին շերտավորելու և լոյալներին գրավելու քաղաքականությունը¹:

Բայց պայքարի հետևանքով բոլորովին նոր իրադրություն կազմավորվեց: Խորհրդային իշխանությունն ու կոմունիստական կուսակցությունը հաղթանակեցին կոլտնտեսային և խորհրդային շինարարութեան ֆրոնտում, հաղթահարեցին քաղաքի և դյուղի կապիտալիստական տարրերին, վերացրին հացի դժվարությունները:

Այսպիսով, այն գլխավորը, վորի նկատմամբ կասկածում եր հին ինտելիգենցիայի զգալի մասը, հաղթահարված եր: Խորտակվեցին նաև հույսերը ինտերվենցիայի նկատմամբ: Այս ամենն ոժանդակեց ինտելիգենցիայի վորոշ մասի՝ Խորհրդային իշխանութեան կողմը կատարված շրջադարձին, այն վորոշ մասի, վորն առաջ այսպես թե այնպես համակրում եր վնասարարներին: Ընկեր Ստալինը նախադրուշացնում եր այն ժամանակ.

«Այս, իհարկե, չի նշանակում, թե մեզանում վնասարարներ այլևս չկան: Վո՛չ, չի նշանակում: Վնասարարներ կան և կլինեն, քանի դեռ մեզանում դասակարգեր կան, քանի դեռ կա կապիտալիստական շրջապատում: Բայց այս նշանակում է, թե, քանի վոր, այսպես թե այնպես, տեխնիկական հին ինտելիգենցիայի՝ վնասարարներին առաջնորդում համակրող նշանակելի մասն այժմ շրջադարձ է կատարել դեպի Խորհրդային իշխանութեան կողմը,—ակտիվ վնասարարներ փոքր քանակութեամբ են մնացել, նրանք մեկուսացված են և նրանք միառժամանակ պետք է խորին ընդհատակ քաշվեն:

¹ Ստալին, Լենինի դժի հարցերը, հայ. հրատ., էջ 582:

Բայց սրանից հետևում է, վոր սրա համապատասխան՝ մեր քաղաքականությունն ել տեխնիկական հին ինտելիգենցիայի նկատմամբ պետք է փոխվի: Յեթե վնասարարութեան յեռուն շրջանում մեր վերաբերմունքը դեպի տեխնիկական հին ինտելիգենցիան արտահայտվում եր գլխավորապես ջախջախման քաղաքականութեամբ, ապա այժմ, այդ ինտելիգենցիայի՝ Խորհրդային իշխանութեան կողմը շրջադարձ կատարելու ժամանակաշրջանում մեր վերաբերմունքը դեպի նա պետք է արտահայտվի գլխավորապես նրան դրամելու և նրա մասին հոգատարություն ունենալու քաղաքականութեամբ: Սխալ և վոչ-դիալեկտիկական կլինեք շարունակել հին քաղաքականությունը նոր, փոխված պայմաններում: Հիմարություն և անխոհեմություն կլինեք հին զպրոցի դրեթե ամեն մի մասնադետի ու ինժեների դիտել վորպես չրոնված հանցագործի ու վնասարարի: «Մասնադիտակությունը» մեզանում միշտ համարվել է և մնում է վնասակար ու ամոթալի յերևույթ:

Այսպես, ուրեմն, փոխել վերաբերմունքը դեպի հին դպրոցի ինժեներ-տեխնիկական ուժերը, նրանց վերաբերմամբ ցուցաբերել ավելի մեծ ուշադրություն ու հոգատարություն, նրանց ավելի համարձակ կերպով գրավել աշխատանքի—այս է խնդիրը¹:

Սակայն մնում եր արժատական խնդիրը, վորը դրված եր պրոլետարիատի կողմից իշխանութեան դրամման հենց առաջին որերից,—ստեղծել իր սեփական ինտելիգենցիան: Ընկեր Ստալինը բացատրում եր, վոր մեզ անհրաժեշտ է ինչ ել վոր լինի ստեղծել մեր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան: Նա ասում եր.

«մեզ վոչ ամեն տեսակի հրամանատարական ու ինժեներ-տեխնիկական ուժեր են հարկավոր: Մեզ հարկավոր են հրամանատարական ու ինժեներ-տեխնիկական այնպիսի ուժեր, վորոնք ընդունակ են հասկանալու մեր յերկրի բան-վոր դասակարգի քաղաքականությունը, ընդունակ են յուրացնելու այդ քաղաքականությունը և պատրաստ են խղճմտանքով իրագործելու այն: Իսկ այս ի՞նչ է նշանակում:

¹ Ստալին, Լենինի դժի հարցերը, հայ. հրատ., էջ 583—584:

Այս նշանակում է, վոր մեր յերկիրը մտել է զարգացման մի այնպիսի փուլ, յերբ բանվոր դասակարգը պետք է իր համար ստեղծի իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան, վորն ընդունակ է պաշտպանելու նրա՝ չահերն արտադրութեան մեջ, վորպէս տիրապետող դասակարգի շահեր:

Վոչ մի տիրապետող դասակարգ յուր չի գնացել առանց իր սեփական ինտելիգենցիան ունենալու: Վոչ մի հիմք չկա կասկածելու այն մասին, վոր ԽՍՀՄ բանվոր դասակարգը նույնպէս չի կարող յուր գնալ առանց իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան ունենալու»¹:

Ընկեր Ստալինի գեկալարութեամբ կուսակցութեանը բոլոր ուժերով ձեռնամուխ յեղալ այս վիթխարի խնդրի կատարմանը և ստեղծեց հրաշալի նոր ինտելիգենցիա: Ըստ այն տվյալների, վոր ընկ. Մոլոտովը բերեց Համկ(բ)կ XVIII Համագումարում, խորհրդային ինտելիգենցիայի ընդհանուր քանակը հասնում է 9.591 հազ. մարդու: Ընտանիքների անդամների հետ միասին խորհրդային ինտելիգենցիան այժմ կազմում է ԽՍՀՄ բնակչութեան մինչև 14%: Ընկ. Մոլոտովն իր գեկուցման մեջ բերեց մի փայլուն որինակ—1913 թ. Կուրսկի նահանգի ինտելիգենցիան համեմատեց 1937 թ. Կուրսկի մարզի ինտելիգենցիայի հետ. այնտեղ կար 3 հազ. ուսուցիչ, իսկ դարձաւ 24 հազ., 70 գյուղատնտեսի փոխարեն—2.279. 274 բժշկի փոխարեն—941. 636 ֆերչերի ու մանկաբարձուհու փոխարեն—2.357:

Խորհրդային ինտելիգենցիայի այս հսկայական բանակը արժանի չէ սիրալիր ուշադրութեան: Պետք է նրան գինել հասարակական զարգացման որենքների, կոմունիզմի կառուցման որենքների գիտութեամբ: Ամբողջ խորհրդային ժողովուրդը հիշում է, թե ինչպիսի հրաշալի բնութագիր տվեց մեր ինտելիգենցիային ընկեր Ստալինը Խորհուրդների Համամիութենական արտակարգ VIII Համագումարում.

«այժմ նա իրավահավասար անդամ է խորհրդային հասարակութեան, վորտեղ նա բանվորների և գյուղացիների հետ մեկտեղ, նրանց հետ միասին լծված, կատարում է նոր

անդամակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցումը:

Ինչպէս տեսնում եք, դա բոլորովին նոր, աշխատավոր ինտելիգենցիա չէ, վորի նմանը չէք դոնի յերկրադնդի վոչ մի յերկրում»¹:

Դրա 80—90%-ը դուրս է յեկել բանվոր դասակարգի, գյուղացիութեան, աշխատավոր ժողովրդի ծոցից: Յեթե վերջինեք բարձրագույն ուսումնական հաստատութիւններում սովորողների կազմը անցյալ տարվա սկզբին, ապա կստացվի (այժաները վերջված են 576 բուհերի մասին)՝ բանվորներ և բանվորների յերեխաներ—33,9%, կոլտնտեսականներ—16%, մասնապետներ և նրանց յերեխաներ—8,3 տոկոս, մնացած ծառայողներ—33,7%, մեծտնտես-գյուղացիներ—5,6% և այլն: Կուսակցութեան XVIII Համագումարում բազմաթիւ փաստեր եյին բերվում, վորոնք ցույց են տալիս, թե ինչպիսի փոփոխութեաններ են կատարվել մեր ինտելիգենցիայի կազմում: Ահա, որինակ, ինչ էր ստում Համկ(բ)կ Կենտկոմի քարտուղար ընկ. Չախարովը Տիմիբյազեվյան գյուղատնտեսական ակադեմիայի մասին, վորտեղ ներկայումս սովորում են այլևի քան 2 հազ. մարդ:

«1917 թ. Ակադեմիան նշում էր իր գոյութեան 52 տարին: 52 տարվա ընթացքում Ակադեմիան ավարտել են 2.705 մարդ:

Իսկ ուլքե՞ր եյին սովորում այդ Ակադեմիայում: Ահա տեղեկանք 1913 թ. վերաբերյալ: 1.322 ուսանողներից Ակադեմիայում սովորում եյին՝ իշխաններ—2, բարոններ—1, տոհմական ազնվականներ—165, անձնական ազնվականներ—5, գլխավորական ծառայողների զավակներ—196, հոգեվոր կոչում ունեցող անձերի զավակներ—94, տոհմական պատվավոր քաղաքացիներ—69, անձնական պատվավոր քաղաքացիներ—23, վաճառականի կոչում ունեցող անձեր—73, մեչչաններ—290, կադակներ—37, գյուղացիներ կուլակների ընտանիքներից—322...

¹ Ստալին, Լենինի մի հարցերը, հայ. հրատ., էջ 579—580:

¹ Ստալին, ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախագծի մասին, հայ. հրատ., էջ 21—22, 1937 թ.:

Ներկայումս Ակադեմիայում ստորորում են՝ բանվորներ—636, կոլտնտեսական գյուղացիներ—820, մասնագետներ 76, ծառայողներ—652»:

Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը բացառիկ հոգացողություն են ցուցաբերում խորհրդային ինտելիգենցիայի նյութական-կենցաղային դրության անդադրում բարելավման մասին: Թոշակների բարձրացումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, բժշկական աշխատողների, ուսուցիչների և դպրոցական մյուս աշխատողների աշխատավարձի բարձրացումը, դրույքների բարձրացումը Կարմիր Բանակում և Խորհրդային իշխանության դարձյալ մի շարք համանման միջոցառումներ, վորոնք բերում են նոր հասարակակարգի բնույթից, ցույց են տալիս ամբողջ աշխարհին, թե վորքան բարձր և դնահատում յերկիրն իր ինտելիգենցիային, ստալինաբար հոգս քաշում նրա մասին, վորպես ժողովրդի լավագույն և ամենաարժանավոր գավակների:

Բարձրագույն դպրոցի աշխատողների առաջին Համամիութենական խորհրդակցությանն ընկ. Մուրտուլն ասաց.

«...բոլոր բուրժուական յերկրներում աճում և դործագրելությունը դիտական պրոֆեսիաներում: Այդ վերաբերում և վոչ միայն Յեվրոպային, այլև Ամերիկային: Արդեն ինտելիգենտական աշխատանքի այնպիսի ճյուղեր կան, վորտեղ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների կեսը մնում և առանց աշխատանքի, իսկ հաճախ նաև առանց մի կտոր ապահովված հացի: Հապա մի վորոնեցե՛ք մեղ մոտ զործագուրկ գիտնական, զործագուրկ մասնագետ: Յեթե վորեւե մեկը մեկ մոտ գտներ զործագուրկ գիտնական, մենք նրան մրցանակ կտայինք... Այնպիսի բաները, ինչպիսին և «գիտական պրոֆեսիաների զործագրելությունը», մեր պայմաններում ուղղակի տարրերնակ են հնչում»¹:

Կապիտալիստական յերկրներում հարյուր-հազարավոր կրթված մարդիկ հնարավորություն չունեն իրենց գիտելիքները դործագրելու, գրկված են աշխատանքից: Փակվում են

դպրոցները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, կուլտուրական հիմնարկները:

Հենց նույն ժամանակ մեր յերկրում մեծագույն հարգանքով են շրջապատված ինտելիգենցիան, դիտություն և փորձի մարդիկ, վորոնք նվիրված են հայրենիքին, ժողովրդին: Ինժեներներն ու արտիստները, ճարտարապետներն ու դրողները, գյուղատնտեսներն ու բժիշկները, կուսակցական և խորհրդային աշխատողները զործարանների և կուլտրնտեսությունների լավագույն ստալանովականների հետ հավասար պարզևատրված են Խորհրդային Միության շքանշաններով:

* * *

«Չնայած խորհրդային ինտելիգենցիայի հարցում կուսակցության ունեցած դերքի լիակատար պարզորոշությունը, մեր կուսակցության մեջ գեուես տարածված են գեպի խորհրդային ինտելիգենցիան թշնամական և կուսակցության դիրքի հետ անհամատեղելի հայացքներ»¹ —ասաց ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում:

Այդպիսի վերաբերմունքը գեպի ինտելիգենցիան յերբեմն անդիտակցականության և անմտածողության արդյունք և հանդիսանում, բայց պետք և կարողանալ գտնել այստեղ նաև դասակարգային թշնամու ձեուքը, վորը, չարաչանելով բանվորների և գյուղացիների՝ ինտելիգենցիայի հանդեպ ունեցած հասկանալի զգուշավորությունը, հատկապես հին մասնագետների հանդեպ, վորոնց մի մասը այդպես յերկար տատանվում եր, իսկ յերբեմն ել ուղղակի վնասում եր, հիմա փորձում և խղել գիտություն և աշխատանքի դաշինքը, խանդարել մեր առաջ շարժմանը:

Շատ յերկտասարգ ընկերներ չգիտեն, վոր կուսակցությունը դեռ մինչհեղափոխական պայմաններում, յերբ ինտելիգենցիայի մեծամասնությունը ծառայում եր բուրժուազիային և կալվածատերերին, բացասաբար եր վերաբեր-

¹ Մուրտուլ, О высшей школе, № 7—8, 1938 թ.:

¹ Ստալին, Հաշվետու գեկուցում կուսակցության XVIII համագումարում ՀամԿ(բ)Կ կենտկոմի աշխատանքի մասին, հայ. հրատ., № 66, 1939 թ.:

վում մախայեվական տրամադրություններին և հայացքներին :

Բոլշևիկները կուսակցությունը դեռ մինչև հեղափոխությունը ջախջախեց մախայեվչինան : Ամենքը ծանոթ չեն այդ պայքարի հանդամանքներին հետ, իսկ դրանք խիստ ուսանելի չեն : Այն հանդամանքը, վոր ինտելիգենցիայի զգալի մասը հոգով սրտով եր ծառայում ինքնակալական-վոստիկանական, բուրժուական-կալվածատիրական պետութեանը, առաջ բերեց բանվորներին և աշխատավոր դուրսացնելով թե՛ անհատական անվտանգություն դեպի նա : Ինտելիգենցիայի մի մասը հանդեպ յեղած այդ անվտանգությունից և անդամ ատելութունից ոգտվեց անարխիստական յերանգի ինտելիգենտներին մի խմբակ իր «մախայեվական» թեորիայի համար, վորն այդպես և կոչվել այդ խմբակի դիտավոր «զաղափարախոսի» — անցյալ դարի 90-ական թվերի լեհական բանվորական շարժման մասնակից Յան Վացլավ Մախայսկու (կեղծանունը — Ա. Վոլսկի) ազգանունով :

Մախայեվականներն ապացուցում էին, վոր «ինտելիգենցիան հանդիսանում է առանձին դասակարգ», այն և չհազործող դասակարգ : Մախայսկու ատելով, հեղափոխական մարքսիզմի և ոպորտունիզմի միջև վոչ մի սկզբունքային տարբերություն չկա . ինչպես սոցիալ-դեմոկրատները, այնպես և մարքսիզմի ունեզատները իբր թե ուզում էին բանվորների տնտեսական պահանջները «նենգափոխել» (?) քաղաքական պայքարով միմիայն նրա համար, վորպեսզի, դեն չպրտելով կապիտալիստներին, ինտելիգենցիան կարողանա բացի այն հոնորարից, վոր նա ստանում է բուրժուադիտայից, լիովին իրեն յուրացնել ամբողջ հովելյալ արժեքը :

Այդ զրպարտչական թեորիան ոգտվում եր կեղծ, նենգադարսված նյութերից և չեր դիմանում ամենափոքր քննադատութեան անդամ : Իհարկե, ինտելիգենտներին ճնշող մեծամասնությունը չեր ապրում այնպես, ինչպես կապիտալիստները : Մախայեվականները բանվորներին պարզապես զրգոում էին սոցիալիստների դեմ, աշխատում էին Մարքսի և Ենդելսի ուսմունքը վարկաբեկել մասսաների մեջ, տարերային շարժումն անջատել նրա դիտակից տարրերից :

Դժվար չե տեսնել, վոր մախայեվականներն ազգական են «եկոնոմիստներին» : Այնպես, ինչպես և «եկոնոմիստները», նրանք ևլ բանվոր դասակարգին հանձնարարում էին հեռու մնալ և նույնիսկ հրաժարվել քաղաքական պայքարից . այնպես, ինչպես և «եկոնոմիստները», նրանք ևլ խանդարում էին բանվոր դասակարգին ստեղծելու իր ինքնութունն բանվորական կուսակցությունը . այնպես, ինչպես և «եկոնոմիստները», նրանք ևլ ժխտում էին մարքսիստական սոցիալիստական ինտելիգենցիայի կազմակերպչական դերը :

Մախայեվականներն իրենց առաջ բուրժուադիտայի իշխանությունը տալալելու խնդիր չէին դնում : Նրանք բանվորներին հավատացնում էին, թե տնտեսական պահանջներին, տնտեսական գործադուլների միջոցով այնպիսի զիջումներ կարելի չե ձեռք բերել կապիտալիստներից, վոր բանվորի աշխատավարձը հավասարվում է բարձրագույն ինտելիգենցիայի աշխատավարձին և նույնիսկ կապիտալիստի յեկամութին : Նրանք պաշտպանում էին վոչ թե պարադիտական դասակարգերի վերացումը, այլ զարգացում էին այն «թեորիան», վոր իբր թե կապիտալիզմի որով բանվոր դասակարգը կարող է հալաաքվել կապիտալիստին : Կույր, անարխիստական խռովարարութեան մեջ մախայեվականները հասան մինչև այնտեղ, վոր, վորպես «ամենախսկական» հեղափոխական ուժ, սկսեցին առաջ քաշել . . . սեհարյուրյա-կայիններին, խուլիգաններին, ջարդարարներին :

Բոլշևիկները յեռանդադին մերկացնում էին մախայեվականների դեմագոգիան, վորոնք իրենց համար կոզմոս-կիցներ էին հավաքադրում հետամնաց, սակավ-գիտակից բանվորներին միջից, առանձնապես հեղափոխական ալիքի անկման ժամանակաշրջանում : Մախայեվականների դեմ մղված պայքարին մասնակցողներից շատերի մեջ ալիամ մի միտք եր ծագում՝ չի՞ հանդիսանում արդյոք մախայեվչինան նույն «դուքատովչչինան», միայն այլ «հրատարակութեամբ», — չի՞ կանգնած արդյոք մախայեվականների թիկունքում ոխրանկան :

Մախայեվչչինան ապադասակարգայնացած տարրերի — բոսյակների, լումպեն-պրոլետարների, մեչչանութեան մի մասի, արհեստավորների և կապիտալիստական հասարա-

կության քրեական «տականքի» գաղափարախոսությունն էր: Բայց ինչքան ել աննշան լինեյին մախայելականների կադերերը, այնուամենայնիվ, մախայելչչինան վորոչ հետք թողեց բանվոր դասակարգի մեջ: Մախայելչչինայի այլանդակ մնացորդներ դեռ կան մեր յերկրում, նրանք հանդես են գալիս գանաղան ձևերով, յերբեմն նրանք հանդիսանում են անդիտակցականության արդյունք, իսկ յերբեմն դա պրովոկացիոն, թշնամական աշխատանքի մեթոդ է, աշխատանք, վորի նպատակն է ջարդել մեր խորհրդային, ժողովրդական ինտելիգենցիայի կադերերը: Մախայելչչինայի պատմությունը գիտենալը մասսաների համար հեշտացնում է պայքարը նրա վտանգավոր մնացորդների դեմ:

Ինտելիգենցիայի դեմ գոյություն ունեցող նախապաշարմունքն իրեն համար սննդավոր հող դառավ այն պայմաններում, յերբ ինտելիգենցիայի գլավի մասը պրոլետարական հեղափոխության հանդես թշնամական դիրք բռնեց: 1917 թ. հոկտեմբերին առաջին անգամ մարդկության պատմության մեջ բանվոր դասակարգն իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Յեվ ահա նրանք, ովքեր ծառայում էին ցարին, կապիտալիստներին և կալվածատերերին, իրենց գլավի մեծամասնությամբ հրաժարվեցին ազնվորեն և հավատարիմ ծառայել աշխարհի առաջին պրոլետարական պետությանը:

Սնկառկած է, վոր ինտելիգենցիայի սարտաժը քաղաքացիական պատերազմի առաջին շաբաթներին, ամիսներին և նույնիսկ առաջին տարիներին ողնեց ինտելիգենցիայի դեմ յեղած այդ նախապաշարմունքների պահպանմանն աշխատավորների մի մասի մեջ: Վորոչ ծանր գլացում թողեց բանվոր դասակարգի մեջ նաև բուրժուական ինտելիգենցիայի մի մասի վնասարարական աշխատանքը սոցիալիստական շինարարության տարիներին:

Բայց ճիշտ չէ բուրժուական ինտելիգենցիայի հանդես յեղած այդ կասկածելի վերաբերմունքը, վորն առաջացել է վնասարարության և սարտաժի փաստերից, տարածել նոր, խորհրդային ինտելիգենցիայի վրա, վորը հասունացել է մեզ մոտ խորհրդային իշխանության տարիների ընթացքում, և այն հին մասնագետների վրա, վորոնք ազնվորեն աշխատում են խորհրդային յերկրի բարորության համար,

աշխատելով իրենց ուժերի և հնարավորությունների չափով հասկանալ մարքս-լենինյան ուսմունքի և մեր կուսակցության գործունեյության ճշմարտացի լինելը: Այդպիսի վերաբերմունքը դեպի մեր ինտելիգենցիան միմիայն թշնամիներին է ձեռնտու:

Դրա համար Կենտկոմի վորոշումը «Կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին»՝ «Համկ(բ)Կ սրաւության համառոտ դասընթացի» լույսընծայման կապակցությամբ՝ հատուկ ուշադրություն է դարձնում այն բանի վրա, վոր՝

«Կուսակցական պրոպագանդայի գործում կարեւորագույն թերություն է հանդիսանում կուսակցական կազմակերպությունների կողմից ցուցաբերվող արհամարհանքը դեպի մեր կադերերի, մեր խորհրդային ինտելիգենցիայի, — կուսակցական, կոմյերիտական, խորհրդային, տնտեսական, կոոպերատիվ, առևտրական, պրոֆմիութենական, գյուղատնտեսական, լուսավորական, զինվորական կադերերի, այսինքն՝ կուսակցական, պետական և կոլտնտեսային ապարատի կադերերի քաղաքական պատրաստության գործը, դեպի մարքս-լենինյան կոլման գործը, կադերեր, վորոնց ոգնությամբ են բանվոր դասակարգն ու դյուղացիությունը կառավարում խորհրդային յերկիրը»:

Կենտրոնական Կոմիտեն այդ վորոշման մեջ մատնանշում է՝

«Վոչ մի պետություն չէր կարող և չի կարող յուզանալ առանց իր ինտելիգենցիայի, առավել ևս չի կարող առանց ինտելիգենցիայի յուլա դնալ բանվորների և դյուղացիների սոցիալիստական պետությունը: Մեր ինտելիգենցիան, վորն աճել է խորհրդային իշխանության տարիների ընթացքում, կազմում են պետական ապարատի կադերերը, վորոնց ոգնությամբ բանվոր դասակարգը վարում է իր ներքին և արտաքին քաղաքականությունը: Դրանք յերեկվա բանվորներն ու դյուղացիներն են՝ և բանվորների ու դյուղացիների զավակները, վորոնք առաջ են քաշվել հրամանատարական պոստերի: Հատուկ նշանակություն ունի ինտելիգենցիան այնպիսի մի յերկրում, ինչպիսին մեր յերկիրն է, վորտեղ պետությունն է ուղղություն տալիս առն-

տեսութեան ու կուլտուրայի բոլոր ճյուղերին, այդ թվում նաև գյուղատնտեսութեանը, և վորտեղ յուրաքանչյուր պետական աշխատող, վորպեսզի գիտակցաբար ու հաջողութեամբ կատարի իր աշխատանքը, պետք է հասկանա պետութեան քաղաքականութիւնը, նրա խնդիրները յերկրից դուրս և յերկրի ներսում:

Հետևապէս, խորհրդային ինտելիգենցիայի մարքս-լենինյան դաստիարակութեան խնդիրը բոլշևիկներէ կուսակցութեան ամենաառաջնահերթ ու կարևորագույն խնդիրներէ մեկն է հանդիսանում:

Խորհրդային ինտելիգենցիայի համար չի կարող լինել այլ ուղի, բացի այն ուղուց, վորով մեր բոլշևիկյան կուսակցութիւնը տանում է խորհրդային ժողովրդին և ամբողջ պրոպրետարիատը և առաջավոր մարդկութեանը:

Խորհրդային ինտելիգենցիայի և խորհրդային գիտութեան ուժը նրա՝ ժողովրդի հետ ունեցած կապն է:

1938 թ. մայիսի 17-ին բարձրագույն դպրոցների աշխատողների ընդունելութեանը կրեմլում ընկեր Ստալինը մեր ամբողջ կուսակցութեան անունից, ամբողջ խորհրդային ժողովրդի անունից ասաց, թէ ինչպէս են վերաբերվում կոմունիստները գիտութեանը:

«Գիտութեան ծաղկման կենացը, այն գիտութեան, վորը չի պարսպվում ժողովրդից, իրեն հեռու չի պահում ժողովրդից, այլ պատրաստ է ծառայելու ժողովրդին, պատրաստ է ժողովրդին հաղորդելու գիտութեան բոլոր նվաճումները, վորն սպասարկում է ժողովրդին վոչ թէ հարկադրաբար, այլ կամավոր կերպով, հաճույքով: (Մափախարություններ):

Գիտութեան ծաղկման կենացը, այն գիտութեան, վորն իր հին ու ճանաչված ղեկավարներին թույլ չի տալիս ինքնազոհ կերպով պարփակվել գիտութեան քուրմերի կեղևի մեջ, գիտութեան մոնոպոլիստների կեղևի մեջ, վորը հատուկ է գիտութեան յերիտասարդ աշխատողների հետ գիտութեան հին աշխատողների դաշինքի իմաստը, նշանակութիւնը, ամենագործիւթիւնը, վորը գիտութեան բոլոր դրոները կամավոր կերպով ու հաճույքով բաց է անում մեր յերկրի յերիտասարդ ուժերի առաջ և նրանց հնարավորու-

թիւն է տալիս նվաճելու գիտութեան բարձունքները, վորն ընդունում է, վոր ապագան պատկանում է գիտութեան յերիտասարդութեանը: (Մափախարություններ):

Գիտութեան ծաղկման կենացը, այն գիտութեան, վորի մարդիկ, հասկանալով գիտութեան մեջ հաստատված տրագիցիաների ուժն ու նշանակութիւնը և դրանք հմտորեն ոգտադործելով ի շահ գիտութեան, այնուամենայնիւ, չեն ուղում լինել այդ տրագիցիաների ստրուկները, վորն ունի հին տրագիցիաները, նորմաները, դիրքավորումները փշրելու համարձակութիւնը, վճռականութիւնը, յերբ դրանք դառնում են հնացած, յերբ դրանք արդէլակի յեն վերածվում առաջնադասման համար, և վորը կարողանում է ստեղծել նոր տրագիցիաներ, նոր նորմաներ, նոր դիրքավորումներ: (Մափախարություններ)»¹:

Ընկեր Ստալինը որինակներ բերեց գիտութեան մեծ մարդկանց, «քաջարի մարդկանց, վորոնք կարողանում եյին փշրել հինը և ստեղծել նորը, չնայած ամեն տեսակ խոչընդոտներին, հակառակ ամեն բանի»²:

Ընկեր Ստալինը հիշեցրեց գիտութեան այնպիսի մարդկանց մասին, ինչպէս են Գալիլէյը, Դարվինը. նա հիշեցրեց գիտութեան մեծագույն առաջնորդի և արդիականութեան մեծագույն մարդու—Լենինի մասին. նա ցույց տվեց, թէ ինչպէս մեր ժամանակն առաջ է քաշում մարդիկ, վորոնք գիտական աշխարհում անհայտ են, վորոնք չունեն գիտական աստիճաններ, բայց, այնուամենայնիւ, մարդիկ, վորոնք նոր ճանապարհ են բանում գիտութեան և տեխնիկայի մեջ, ինչպէս Ստալինովը, Պապանինը, վորոնք «նովատորներ են գիտութեան մեջ, մեր առաջավոր գիտութեան մարդիկ են»:

Գիտութիւնը մեղանում դառնում է բոլոր աշխատողների սեփականութիւնը: Յեւ յեթե Դյուբուա-Ռեյմոնի նման բուրժուական գիտնականները կարծում եյին, թէ ճշմարտութիւնը չի կարող մինչև վերջն բմբռնել, ապա

¹ Ընկեր Ստալինի ճառը բարձրագույն դպրոցի աշխատողների ընդունելութեանը կրեմլում 1938 թ. մայիսի 17-ին, էջ 4, Հայպետադհրատ., 1938 թ.:

² Նույն տեղում:

կոմունիստական հասարակութեան առաջ չկան դիտելիքի
այնպիսի դադարներ, չկան դիտութեան այնպիսի դադար-
ներ, վորոնք չկարողանային ըմբռնել, ձեռք բերվել,
վորոնք չկարողանային դառնալ բոլոր աշխատողների սեփա-
կանութիւն:

* *

Ընկեր Ստալինը կուսակցութեան XVIII համագումարում
արած իր զեկուցման մեջ, ինչպես հայտնի յե, մեծ
ուշադրութիւն դարձրեց խորհրդային ինտելիգենցիայի
վրա, ամէն մեր կողմերի կերպարանքի դրվագած բնութա-
գիրը:

«Հին ինտելիգենցիայի դիֆերենցիացիայի և բեկման
այդ տանջալից պրոցեսին զուգընթաց ընթանում եր նոր ին-
տելիգենցիայի ձևավորման, մոբիլիզացիայի և ուժերի հա-
վաքման բուռն պրոցեսը: Հարյուր-հազարավոր յերիտա-
սարդ մարդիկ, բանլոր դասակարգի, դյուզացիութեան, աշ-
խատավոր ինտելիգենցիայի շարքերից յեկածներ, դնացին
բուհերն ու տեխնիկումները և, դպրոցներից վերադառնա-
լով, լրացրին ինտելիգենցիայի նոսրացած շարքերը: Նրանք
ինտելիգենցիայի մեջ նոր արյուն լցրին և նոր ձևով, խոր-
հրդային ձևով կենդանացրին նրան: Նրանք արմատապես
փոխեցին ինտելիգենցիայի ամբողջ կերպարանքը, ըստ ի-
րենց պատկերի ու նմանութեան: Հին ինտելիգենցիայի մնա-
ցորդները լուծվեցին նոր, խորհրդային, ժողովրդական ին-
տելիգենցիայի ընդերքում: Ստեղծվեց, այսպիսով, նոր,
խորհրդային ինտելիգենցիա, վորը սերտորեն կապված է
ժողովրդի հետ և իր մասնայով պատրաստ է հոգով ու
մարմնով ծառայելու նրան:

Այս ամենի հետևանքով մենք այժմ ունենք բազմաթիւ,
նոր, ժողովրդական, սոցիալիստական ինտելիգենցիա, վորն
ինչպես իր կազմով, այնպես էլ իր սոցիալ-քաղաքական
գեմքով արմատապես տարբերվում է հին, բուրժուական
ինտելիգենցիայից»¹:

¹ Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցութեան XVIII համագումարում ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին, էջ 70, Հայ. պետ. քաղ. հրատ., 1939 թ.:

Վերին աստիճանի վնասակար կլիներ այս նոր ինտելի-
գենցիան, վորն իսկապես խորհրդային յերկրի ազն ե քար-
ձեղ, թեկուզ ինչ չափով էլ լինի նույնացնել հին ինտելի-
գենցիայի հետ, վորը ծառայում եր կալվածատերերին և
կապիտալիստներին: Այն թեորիան, վորն իր ժամանակին
արդարացնում եր անվստահութիւնը դեպի այդ ինտելիգեն-
ցիան, հիմա, ասաց ընկեր Ստալինը, «իր դարն ապրել է և
նա այլևս չի սազում մեր նոր, խորհրդային ինտելիգեն-
ցիային: Նոր ինտելիգենցիայի համար հարկավոր է նոր
թեորիա, վորը մատնացույց է անում նրա նկատմամբ բա-
րեկամական վերաբերմունքի, հոգատարութեան, հարգանքի
և նրա հետ՝ հանուն բանլոր դասակարգի ու գյուղացիու-
թեան շահերի համագործակցելու անհրաժեշտութիւնը»¹:

Ընկեր Ստալինը ծաղրեց բոլոր նրանց, ովքեր զեռ ելի չեն
հատկանում կատարված փոփոխութիւնները և շարունակում
են նոր ինտելիգենցիայի վրա տարածել հին թեորիան, վորն
ուղղված է բուրժուական ինտելիգենցիայի դեմ. այդ «մար-
դիկ, պարզվում է, պնդում են, վոր այն բանլորները և
գյուղացիները, վորոնք դեռ վերջերս ստախանովականորեն
աշխատում էին գործարաններում և կոլտոտեսութիւններ-
ում, իսկ հետո բուհեր են ուղարկվել կրթութիւն ստա-
նալու համար, դրանով իսկ դադարում են իսկական մար-
դիկ լինելուց, դառնում են յերկրորդ տեսակի մարդիկ:
Դուրս է գալիս, վոր կրթութիւնը վնասակար և վտանգա-
վոր բան է: (Ծիծաղ): Մենք ուզում ենք բոլոր բանլորնե-
րին և բոլոր գյուղացիներին դարձնել կուլտուրական և
կրթված մարդիկ և մենք այդ բանը կանենք ժամանակի ըն-
թացքում: Բայց ըստ այդ տարրերինակ ընկերների հայացքի
ստացվում է, վոր նման ձեռնարկումը մեծ վտանգ է պա-
րտնակում իր մեջ, վորովհետեւ այն բանից հետո, յերբ
բանլորներն ու գյուղացիները դառնան կուլտուրական ու
կրթված, նրանք կարող են յերկրորդ տեսակի մարդկանց
կարգը դասվելու վտանգի առաջ կանգնած լինել: (Ընդհա-
նար ծիծաղ): Չի բացառված, վոր ժամանակի ընթացքում

¹ Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցութեան XVIII համագումարում ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին, էջ 71, Հայ. պետ. քաղ. հրատ., 1939 թ.:

այդ տարրերնակ ընկերները կարող են գլորվել մինչև հետամնացության, տգիտության, խալարի, խալարամտության փառաբանումը: Յեւլ դա հասկանալի յե: Թեորիտական խեղումները յերբեք դեպի բարին չեն տարել և չեն կարող տանել»¹:

Նույնչափ սխալ է և վնասակար ինտելիգենցիայի հին կադրերը հակադրել նորերին և, ընդհակառակը, սկզբունքորեն դերադասություն տալ մեկին կամ մյուսին: Տալով ինչպես հին, այնպես էլ նոր կադրերի սպեցիֆիկ առանձնահատկությունները—արժանիքների և թերությունները—կլասիկ գնահատականը, ընկեր Ստալինը կուսակցական XVIII համագումարում արած իր ղեկուցման մեջ նախազգուշացրեց ամեն մի տեղեկացիությունից և միակողմանիությունից՝ կադրեր ընտրելիս.

«Հետևաբար, խնդրն այն չէ, վորպեսզի կողմնորոշվենք կամ հին, կամ թե նոր կադրերով, այլ այն, վորպեսզի հին և յերիտասարդ կադրերին կուսակցության և պետության ղեկավար աշխատանքի մի ընդհանուր նվազախումբում զուգակցելու, միացնելու ընթացք բռնենք»²:

Խորհրդային ինտելիգենցիան ներկայումս վիթխարի ուժ է կազմում: Թե՛ քանակով և թե՛ իր խաղացած դերով Խորհուրդների յերկրի ամբողջ կյանքում, նրա սոցիալիստական շինարարության մեջ խորհրդային ինտելիգենցիայի տեսակարար կշիռն որեցոր աճում է: Ըստ ԽՍՀՄ Պետականի Ժող. Տնտ. Հաշվ. Կենտվարչության, 1937 թ. հունվարին խորհրդային ինտելիգենցիայի կազմն ըստ մասնագիտությունների բաշխվում է հետևյալ կերպով.

1. Ձեռնարկությունների, հիմնարկների, ցեխերի, խորհատեսությունների, կուլտեսությունների և այլնի ղեկավարներ	1.751 հազ. մարդ
2. Ինժեներներ և ճարտարապետներ (առանց ձեռնարկությունների և ցեխերի ղեկավարների)	250 » »

¹ Ստալին, Հաշվետու ղեկուցում կուսակցության XVIII համագումարում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին, էջ 71, Հայ. պետ. քաղ. հրատ., 1939 թ.:

² Նույն տեղում, էջ 53:

3. Միջին տեխնիկական պերսոնալ (տեխնիկներ, աշխուկներ, անտառապետներ, յերկաթուղային կայարանների պետեր և այլն)	810 հազ. մարդ
4. Գյուղատնտեսներ	80 » »
5. Այլ ադրոտեխնիկական պերսոնալ (հողագործներ, հողաշինարարներ, ադրոտեխնիկներ, զոտեխնիկներ)	98 » »
6. Գիտության աշխատողներ (պրոֆեսորներ, բուհերի դասատուներ և այլն)	80 » »
7. Ուսուցիչներ	969 » »
8. Կուլտուր-լուսավորական աշխատողներ (Ժուրիստներ, զրադարանապետներ, ակումբների վարիչներ և այլն)	297 » »
9. Արվեստի աշխատողներ	159 » »
10. Բժիշկներ	132 » »
11. Միջին բժշկական պերսոնալ (բուժականներ, մանկարարձուհիներ, բուժաբույրեր)	382 » »
12. Տնտեսապետներ, վիճակագիրներ	822 » »
13. Հաշվապահներ, հաշվետարներ	1.617 » »
14. Դատական-դատախազական աշխատողներ (դատավորներ, դատախազներ, քննիչներ և այլն)	46 » »
15. Բուհերի ուսանողություն	550 » »
16. Ինտելիգենցիայի այլ խմբեր (ներառյալ ղեկավորական ինտելիգենցիան)	1.550 » »

Ընդամենը . . . 9.591 հազ. մարդ

Վերջին յերկու տարվա ընթացքում խորհրդային ինտելիգենցիան ե՛լ ավելի աճեց, վորովհետև կադրերի պատրաստությունը յուրաքանչյուր տարի ընթանում է ավելի ու ավելի վստահ քայլերով, ավելի մեծ չափերով: Այդ դրությունն ընկեր Ստալինն իր ղեկուցման մեջ նկարագրաբեց համոզիչ թվերով: 1933 թ. ԽՍՀՄ մեջ ընդամենը բաց է թողված (չհաշված ղինվորական մասնադետներին) 34,6 հազ. նոր մասնադետ, իսկ 1938 թ.—106,7 հազ., այսինքն յերեք անգամ ավելի: Ըստվորում 1938 թ. ուսումն ալարտածների մեջ ավելի քան 25 հազ. արդյունաբերության և շինարարության ինժեներներ, 10,6 հազ. գյուղատնտեսության մեքենացման ինժեներներ, գյուղատնտեսներ, անաս-

նաբույժներ և զոոտեխնիկներ, 35,7 հազ. լուսավորության և արվեստի աշխատողներ:

Իհարկե, կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը ինտելիգենցիային, գիտությանը այլ պահանջներ են առաջադրում, քան առաջադրվում են կապիտալիստական հասարակության մեջ: Այդ բանը նշեց ընկեր Ստալինը XVIII համագումարում արած իր զեկուցման մեջ: Նա խոսում էր մարքս-լենինյան պատրաստության, մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետելու վիթխարի, վճռողական նշանակության մասին վոչ միայն կուսակցական աշխատողների համար, այլ մեր ամբողջ ինտելիգենցիայի համար:

«Հարկավոր է վորպես աքսիոմա ընդունել,—ասաց ընկեր Ստալինը,—վոր ինչքան ավելի բարձր է պետական և կուսակցական աշխատանքի ուղած դճյուղի աշխատողների քաղաքական մակարդակը և մարքսիստական-լենինյան գիտակցականությունը, այնքան ավելի բարձր և ավելի արդյունավետ է բուն աշխատանքը, այնքան ավելի եֆեկտիվ կլինեն աշխատանքի արդյունքները և, ընդհանրապես, վորքան ավելի ցած է աշխատողների քաղաքական մակարդակը և մարքսիստական-լենինյան գիտակցականությունը, այնքան ավելի հավանական են աշխատանքի ձախողումները և տապալումները, այնքան ավելի հավանական է աշխատողների իրենց մանրացումն ու վերասերումը գործամուլ-մանրանդիրների, այնքան ավելի հավանական է նրանց այլասերումը: Կարելի չէ համոզված կերպով ասել, վոր յեթե մենք կարողանայինք աշխատանքի բոլոր ճյուղերի մեր կազմերին պատրաստել զաղափարականապես և նրանց քաղաքականապես կոփել այն չափով, վորպեսզի նրանք կարողանան ազատ կերպով կողմնորոշվել ներքին և միջազգային իրողությունների մեջ, յեթե մենք կարողանայինք նրանց դարձնել լիովին հասունացած մարքսիստ-լենինյաններ, վորոնք ընդունակ են առանց լուրջ սխալների լուծելու յերկրի զեկավարման հարցերը,—ապա մենք բոլոր հիմքերը կունենայինք մեր բոլոր հարցերի իննդ տասերորդն արդեն լուծված համարելու: Իսկ այդ խնդիրը մենք անպայման կարող ենք լուծել, վորովհետև մենք այդ խնդիրը լուծելու համար

անհրաժեշտ բոլոր միջոցներն ու հնարավորություններն ունենք»¹:

Պատրաստելով բոլոր մասնագիտությունների կադրեր, հոգալով իրենց գործն իմացող խորհրդային մասնագետներ պատրաստելու մասին, կուսակցությունը և կառավարությունը պետք է հոգ տանեն խորհրդային ինտելիգենցիային զաղափարապես զինելու, հասարակական զարգացման և քաղաքական պայքարի որենքների գիտությամբ, հեղափոխության շարժիչ ուժերի գիտությամբ զինելու մասին: Հենց մարքսիզմ-լենինիզմն է այն մեծ ուսմունքը, վորով զեկավարվելով՝ բոլշևիկյան կուսակցությունը ԽՍՀՄ ժողովուրդներին բերեց դեպի սոցիալիզմի համաշխարհային պատմական հաղթանակները: Մեր ինտելիգենցիան պետք է տիրապետի բոլշևիզմին:

Յերիտասարդ կադրերի աճեցումն ու կազմակերպումը մեղանում սովորաբար կատարվում է ըստ գիտության և տեխնիկայի առանձին ճյուղերի, ըստ մասնագիտությունների: Այդ անհրաժեշտ է և նպատակահարմար: Կարելի է, վոր մասնագետ բժիշկը միևնույն ժամանակ մասնագետ լինի ֆիզիկայից կամ բուսաբանությունից և ընդհանրապես: Սակայն կա գիտության մի ճյուղ, վորի իմացումը պետք է պարտադիր լինի գիտության բոլոր ճյուղերի բոլշևիկների համար: Այդ մարքսիստական-լենինյան գիտությունն է հասարակության մասին, հասարակության զարգացման որենքների մասին, պրոլետարական հեղափոխության զարգացման որենքների մասին, սոցիալիստական շինարարության զարգացման որենքների մասին, կոմունիզմի հաղթանակի մասին: Վորովհետև չի կարելի իսկական լենինյան համարել այն մարդուն, վորն իրեն անվանում է լենինյան, բայց ներփակվել է իր մասնագիտության մեջ, ներփակվել է, ասենք, մաթեմատիկայի, բուսաբանության կամ քիմիայի մեջ և իր մասնագիտությունից դուրս ուրիշ վոչ մի բան չի տեսնում: Լենինյանը չի կարող գիտության իր սիրած ճյուղի մասնագետը միայն լինել,—նա պետք է զրա հետ միասին քա-

¹ Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցության XVIII համագումարում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին, էջ 55, Հայ. պետ. քաղ. գրադ. հրատ., 1939 թ.:

դաքական-հասարակական մարդ լինի, վորը կենդանի կերպով հետաքրքրվում է իր յերկրի վիճակով, ծանոթ է հասարակական զարգացման որենքներին, կարողանում է ողտըվել այդ որենքներից և ձգտում է յերկրի քաղաքական ղեկավարման ակտիվ մասնակիցը լինել: Այդ, իհարկե, լրացուցիչ բեռնավորում կլինի բոլշևիկ մասնադեմոստրի համար: Սակայն դա այնպիսի բեռնավորում կլինի, վորի արդյունքները կհատուցվեն տասնապատիկ»¹:

Կուսակցությունը մեծ ուշադրություն է դարձնում խորհրդային ինտելիգենցիայի—մեր կադրերի թեորիական մակարդակի բարձրացման վրա, քաղաքական դաստիարակություն վրա, վորոնց ողնությունը բանվոր դասակարգը և գյուղացիությունը կառավարում են իրենց յերկրը: Մեզանում գիտությունը դառնում է ամբողջ ժողովրդի սեփականություն: Խոսքը խորհրդային ինտելիգենցիայի ե'լ ավելի բազմաթիվ կադրեր ստեղծելու, բոլոր աշխատավորներին զառարկապես դիմելու մասին է, բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը միջև ինժեներ-տեխնիկական աշխատողների մակարդակը բարձրացնելու մասին:

Ընկեր Ստալինը հաճախակի ասել է, վոր աշխատավորների ամբողջ մասսային պետք է վերածել ինտելիգենտ աշխատողների: Մենք անշեղորեն պնդում ենք դեպի այդ. սոցիալիստական հեղափոխությունը մեծապես հնարավորություններ յերևան հանեց ամբողջ ժողովրդի համար, և առաջիկայում ամբողջ խորհրդային ժողովուրդը գլխովին կազմված կլինի ժամանակակից գիտությանը և կուլտուրային տիրապետող ինտելիգենտ մարդկանցից:

ԽՍՀՄ մտել է զարգացման նոր շրջան, անդասակարգ սոցիալիստական հասարակությունն սփարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը: Այդ շենքը, կոմունիզմի հոյակապ շենքը կառուցելու համար անհրաժեշտ է ներդրել շատ յեռանդ, ժողովրդական ընդու-

նակություններ, աշխատանք, իսկական հերոսություն, նախաձեռնություն, խանդավառություն:

«Մեր ինտելիգենցիային բացառիկ պատասխանատու տեղ է պատկանում այդ պատմական գործում: Կուլտուրայի մարդիկ, տեխնիկայի ու գիտության մարդիկ, հին և նոր ինտելիգենցիան, մեր ուսանողությունը և յերթասարդությունը լրացվող վորակյալ բանվորների կադրերը—բոլորն ե'լ հարկավոր են խորհրդային ժողովրդին, վորպեսզի նա դուրս բերի նոր, մեծ խնդիրներ, վորպեսզի իրականացնի հերթի դրված հիմնական տնտեսական խնդիրը, վորպեսզի հաղթականորեն կատարի յերրորդ հնգամյա պլանը»¹:

Յերրորդ հնգամյա պլանն ամբողջ յերկրի առաջ վիթխարի խնդիրներ է դրել, վորոնց իրականացումն անպայման կատարելի յե. նրանք ամենասերտ կերպով կապված են բանվորների, գյուղացիների և խորհրդային ինտելիգենցիայի կենսական շահերի հետ:


Այդ պլանի կատարումը, ինչպես ասում է ընկեր Մուրտովը, ամենից առաջ կախված է կոմունիստներից և անկուսակցական բոլշևիկ-ղեկավարներից, աշխատանքը կազմակերպելու և աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը բարձրացնելու մեր կարողությունից:

Աշխատավորների կոմունիստական դաստիարակության, բառիս լայն իմաստով կոմունիստական գիտակցականություն ղաստիարակության խնդիրները տվյալ ետապում, յերբ ԽՍՀՄ մեջ անբաժանելիորեն իշխում են տնտեսության սոցիալիստական ձևերը, աշխատանքի սոցիալիստական կազմակերպումը, սոցիալիստական սեփականությունն առաջ են քաշվում առաջին պլան: Այստեղից—մեր ժողովրդական ինտելիգենցիայի վիթխարի դերը, ինտելիգենցիայի, «վորը կարողանում է բոլշևիկորեն աշխատել, բոլշևիկորեն պայքարել հանուն աշխատավորների կուլտուրականության և կոմունիստական գիտակցականության բարձրացման»²:

¹ Ստալին, Հաշվետու ղեկուցում կուսակցության XVIII համագումարում ՀամԿ(բ)Կ կենտոմի աշխատանքի մասին, էջ 55—50, Հայ. պետ. քաղ. հրատ., 1939 թ.:

¹ Մուրտով, ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնգամյա պլանը, էջ 86—87, Հայ. քաղ. հրատ., 1939 թ.:

² ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի բանաձևերը, Հայ. քաղ. հրատ., էջ 54, 1939 թ.:



Թարգմանիչ Ս. Չորանյան
Խմբագիր Բ. Ն. Դավթյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնարու սրբագրիչ Լ. Արուստյան

Դրամի լիազոր № Կ—2472, հրատ № 716

Պատվեր № 166, տիրաժ 10.000

Թղթի չափեր $84 \times 110 \frac{1}{32}$ (32.550 մմ. ներք 1 մմ. մամուլում)

$3\frac{1}{2}$ մմ. մամուլ, $1\frac{3}{4}$ թերթ թուղթ,

Հանձնված է արտադրության 18/VIII 1939 թ.

Ստորագրված է ապագրելու 28/IX 1939 թ.

Դիւնը 60 Կ.

Պետհրատ—Փաղաքական գրականության հրատարակչության
տպարան, Յերեւան, Ալլահիեբեկյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0937785

9 611 1335 1
510
91702 60 4.

11

28374

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ
О РОЛИ ИНТЕЛЛИГЕНЦИИ
В СССР

Армгиз—Издательство полит. литературы
Ереван ● 1939